Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 15.05.2024թ. չորեքշաբթի թիվ 21 (1150)

Հաղթանակի եւ խաղաղության օրվա առիթով

Այց՝ «Հաղթանակ» զբոսայգի

Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի** եւ օրենսդիր ու գործադիր մարմնի անդամների ուղեկցությամբ այցելել է *«Հաղթանակ»* զբոսայգի:

Նիկոլ Փաշինյանը մոտեցել է զբոսայգի ժամանած վետերաններին, շնորհավորել նրանց տոնական օրվա առթիվ եւ մաղթել առողջություն:

ՀՀ բարձրագույն ղեկավարությունը ծաղիկներ է դրել Անհայտ զինվորի հուշարձանին ու հարգանքի տուրք մատուցել ֆաշիզմի դեմ մղված պայքարում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետականության, անկախության, ինքնիշխանության համար իրենց կյանքը տված մեր նահատակների հիշատակին:

* * *

Մայիսի 9-ին, Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի միաբաններն ու ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներն այցելեցին *«Հաղթանակ»* զբոսայգու հուշահամալիր, որտեղ Անհայտ զինվորի հուշարձանին ծաղիկներ զետեղելուց հետո իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան հերոսամարտերում զոհվածների անմար հիշատակին:

Հոգեւորականները Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ **Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի** հանդիսապետությամբ աղոթք բարձրացրին առ Աստված՝ նրանց հոգիների հանգստության համար:

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հաղթանակի ու խաղաղության տոնին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տեր **Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը,** որի ընթացքում հիշատակվում է նաեւ *1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Սուրբ Էջմիածին փոխադրման պատմական օրը:*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ցայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանությունը Պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի *«Գարեգին Ա»* կրթական կենտրոնի տնօրեն Գերաշնորհ **Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը:**

Սուրբ Պատարագի ընթացքում Հայոց Հովվապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Արարողության ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, ներկա հավատացյալ ժողովրդին ու համայն հայությանն ուղղեց իր պատգամը (***տե՛ս՝ էջ 2***):





Այս համարում

● *«Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննության ճշտված ուղեցույցները*

տե՛ս՝ էջ 11-12

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը

Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության սիրելի՛ քաղաքացիներ,

Այսօր մենք նշում ենք երկրորդ աշխարհամարտում, Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի նկատմամբ դաշնակից երկրների տարած հաղթանակի 79-րդ տարեդարձը:

Այդ հաղթանակով առաջադեմ մարդկությունը ոչ ասաց քաղաքակրթության տեսած ամենամեծ չարիքներից մեկին՝ ֆաշիզմին:

Հաղթանակի գործում անգնահատելի է հայ ժողովրդի դերը, որի ավելի քան կես միլիոն ներկայացուցիչներ խորհրդային բանակի կազմում իրենց զգալի ներդրումն ունեցան: Նրանցից 300 հազարը զոհվեցին, 107 հայեր արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Բազմաթիվ հայեր ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում իրենց ներդրումն են ունեցել նաեւ պատերազմի արեւմտյան ճակատներում, պարտիզանական եւ ընդհատակյա պայքարում:

Բոլորովին վերջերս Ֆրանսիայում տեղի ունեցավ մի բացառիկ արարողություն, երբ Ֆրանսիական ընդհատակյա դիմադրության հերոս Միսաք Մանուշյանի եւ նրա կնոջ՝ Մելինե Մանուշյանի աճյունները վերահուղարկավորվեցին Ֆրանսիայի մեծագույն գործիչների Պանթեոնում: Ֆաշիստական Գերմանիայի կողմից օկուպացված Ֆրանսիայում Մանուշյանը եւ նրա ղեկավարած խումբը պայքարում էին այդ երկրի ազատագրման համար՝ չունենալով նույնիսկ Ֆրանսիայի քաղաքացիություն:

Նա, ինչպես նաեւ դաշնակիցների բանակներում ծառայող հայերը կռվում էին մարդկության ազատության համար, եւ այդ ներդրումը ճանաչված ու գնահատված է:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայ ժողովրդի զավակների ժառանգության կրողը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը, որ պետք է ավելի ու ավելի ամրապնդի իր տեղն ու դերը միջազգային հարաբերություններում՝ որպես միջազգային հանրության պատասխանատու անդամ, որը լեգիտիմության հենքի վրա իր ներդրումն է բերում միջազգային կայունությանն ու խաղաղությանը:

Նաեւ այս պատճառով է կառավարությունը որդեգրել խաղաղության օրակարգը՝ այն հենելով Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքի վրա:

Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության սիրելի՛ քաղաքացիներ,

Այսօր մենք ոգեկոչում ենք ոչ միայն ֆաշիզմի դեմ մղված պայքարում, այլեւ Հայաստանի Հանրապետության պետականության, անկախության, ինքնիշխանության համար իրենց կյանքը տված մեր նահատակներին: Շարունակում եմ համոզված մնալ, որ նրանց հիշատակի հավերժացման ամենաարժանի գործն ազատ, երջանիկ եւ բարեկեցիկ Հայաստանի Հանրապետությունը կլինի: Եվ մենք դժվար, բայց հաստատուն քայլերով շարժվում ենք դեպի այդ նպատակը:

Փա՛ռք նահատակներին եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ նախագահ Վահագն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ուղերձը՝ Հաղթանակի եւ խաղաղության օրվա կապակցությամբ



Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի կապակցությամբ:

79 տարի առաջ այս օրը նշանավորվեց ֆաշիզմի դեմ մղած մեծ պատերազմում առաջադեմ մարդկության հաղթանակով: Հայ ժողովուրդն այդ հաղթանակում ունեցավ իր մեծ ավանդը եւ տվեց ծանր կորուստներ:

Մայիսի 9-ի խորհուրդը սակայն, միայն ռազմական հաղթանակով չէ, որ սահմանափակվում է, այդ հաղթանակը նախ եւ առաջ ազատության, խաղաղության եւ ապագայում էլ անարդար պատերազմները կանխարգելելու բովանդակություն ունի:

Թանկագին հայրենակիցներ,

Մեր ժողովուրդը, իր պատմական փորձից ելնելով, շատ լավ գիտի ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղության գինը:

Այսօր, երբ մեր պետությունը կրկին կանգնած է բարդ մարտահրավերների եւ փորձությունների եզրագծին, Երկրորդ համաշխարհային ու Արցախյան պատերազմում զոհված մեր պապերի, հայրերի, եղբայրների եւ որդիների հիշատակի առաջ մեր պարտքը, պարտականությունն ու պատասխանատվությունն է անձնվիրաբար պաշտպանել եւ պահպանել մեր պետության անկախությունը, ազատությունը, հաստատել խաղաղություն մեր երկրի եւ ժողովրդի համար, եւ իհարկե, ջանք ու եռանդ չխնայել մեր պետության ամրապնդման ու հզորացման գործում:

Կրկին շնորհավորելով այս տոնական օրվա կապակցությամբ՝ խաղաղություն ու բարգավաճում մեր պետությանը, քաջառողջություն մեր վետերաններին եւ հավերժ փառք զոհված հայորդիներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց,

Հաղթական անցյալի ներշնչանքով եւ լուսավոր ապագայի հույսով, բայց նաեւ ծանր զգացումներով ենք այսօր դիմավորում Հաղթանակի եւ խաղաղության տոնը, տոնը Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձի: Այս տարի խորհրդանշական զուգադիպությամբ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տոնախմբում է նաեւ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Համբարձումը եւ Հայրապետական Աթոռի Սուրբ Էջմիածնում վերահաստատվելու հիշատակի օրը: Ազգային, պետական ու եկեղեցական կարեւորագույն այս տոների համընկնումով Մայիսի 9-ը ամբողջացնում է խորհուրդը հաղթանակի:

Այսօր մեր երկիրն ու ժողովուրդը դիմագրավում են գոյաբանական ծանրագույն փորձություններ: Անհուն զրկանքների ու զոհողությունների գնով ազատագրված Արցախը բռնազավթված է ու հայաթափված, մեր սրբավայրերն ու շիրիմները՝ լքված ու ավերակված: Վտանգված են Հայաստանի սահմանները, եւ սպառնալիքների տակ՝ հայրենաբնակ մեր ժողովրդի կյանքը, կորսված է մեր անդորրը, եւ խոցոտված՝ մեր ազգային արժանապատվությունը:

Ցավալի կորուստների եւ դառն պարտությունների մեջ մենք վերստին դառնում ենք դեպի Կյանքի Աղբյուրը, դեպի Ամենախնամն Աստված, որ հազարամյակների փորձությունների ու մաքառումների, արհավիրքների ու աղետների մեջ կյանքի ու հարատեւության շնորհով օրհնեց մեզ եւ ոգեշնչեց՝ ասելով. *«Քաջալերվեցեք, որովհետեւ ես հաղթեցի աշխարհին»* (Հովհ. 16.33): Մենք ժառանգներն ենք մի ժողովրդի, որ մահվան ու տառապանքների դեմ գոտեմարտում երբեք չկորցրեց իր հավատն առ Աստված, պահեց հավատարմությունը իր հոգեւոր-ազգային արժեքներին եւ չհրաժարվեց իր ինքնությունից: Մենք հետնորդներն ենք մեր հերոս նախնյաց, որոնց փառապանծ գործերով հզորացել ու պայծառացել է ազգն ու հայրենիքը, դպրությունը, գիտությունն ու մշակույթը: Հայրենի հողը շենացնելու, հայոց պետականությունը վերականգնելու նվիրական տեսիլքը վառ պահելու համար մեր հայրերը 1441 թվականին Սսից Սուրբ Էջմիածին փոխադրեցին Հայոց Հայրապետական Աթոռը:

Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածինը համայն հայության հոգեւոր տունն է, հայոց անկախ պետականության կերտման դարբնոցը, մեր ժողովրդի հաղթանակների ու հարատեւության խորհրդանիշը եւ ազգային մեր անաղարտ ինքնության ջահակիրն ու պահապանը: Սուրբ Էջմիածնի տեսիլքը այսօր եւս շարունակում է մնալ հոգեւոր ներուժն ու ակունքը հաղթանակների: Հաղթանակ՝ փորձությունների դեմ, հաղթանակ՝ ինքնության ու արժանապատվության համար մղվող պայքարում, հաղթանակ՝ առ հայրենին ու առ սրբազան արժեքները հավատարմության: Մեր հաղթանակները չունեն թշնամանքի ու ատելության կնիք, այլոց արժանապատվությունը նսեմացնելու, սրբությունները ոտնահարելու եւ ինքնությունը ոչնչացնելու չարորակ նկրտում: Մեր հաղթանակները ամրապնդում են կամքն ու վճռականությունը՝ հասնելու խաղաղության, անվտանգ պահելու մեր ժողովրդին, վերահաստատելու համազգային սերն ու համերաշխությունը:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Մեր սիրտը հուզում են նույն մտահոգությունները ու ցավերը, որոնք ալեկոծում են հոգիները հայրենիքի ծանր մարտահրավերներով անհանգստացած աշխարհասփյուռ Մեր զավակների: Այդ տագնապներով են նաեւ այս օրերին իրենց ընդվզումի ձայնը բարձրացնում *«Տավուշը հանուն հայրենիքի»* քաղաքացիական շարժման մասնակիցները: Մեր մաղթանքն է, որ շուտափույթ հանգուցալուծում գտնեն առկա հիմնախնդիրները, եւ մեր ժողովուրդը պատվով հաղթահարի մեզ պատուհասած արհավիրքները: Արդ, հույսով ու լավատեսությամբ զինվենք, չտկարանանք դժվարությունների առջեւ, հիշենք մեր նախնիների սխրանքները, թոթափենք վախի ու անտարբերության կործանարար զգացումները, լինենք միակուռ ու միաբան: Համախմբվենք հայոց անկախ պետականության լուսավոր գաղափարի շուրջ՝ Աստծո օրհնությամբ անկասելի դարձնելու մեր ժողովրդի ընթացքը դեպի նոր հորիզոնները մեր լուսավոր գալիքի:

Աղոթենք միասնաբար, որ Աստված խաղաղություն պարգեւի համայն աշխարհին, նոր կորուստներից ու աղետներից հեռու պահի մեր հայրենիքն ու ազգը եւ Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո շնորհի անվտանգ կյանք ու ստեղծարար հաջողություններ այսօր եւ միշտ:

Ամեն:

Նախագիծ

Փոփոխություններ՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգում փոփոխությունները եւ լրացումներ կատարելու մասին»* Կառավարության որոշման նախագիծը:

Համաձայն հիմնավորման՝ 2023 թվականից մեկնարկել է տնօրենների ընտրության եւ նշանակման նոր ձեւաչափով գործընթացը, որի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել կարգավորման ենթակա մի քանի խնդիրներ, մասնավորապես, հարցազրույցի փուլը հաղթահարած հավակնորդների մասնագիտական զարգացման եւ աջակցության տրամադրման, ինչպես նաեւ զարգացման ծրագրի փորձաքննությունն իրականացնող կազմակերպությունների աշխատակարգի հաստատման եւ փորձաքննության ընթացակարգերի վերաբերյալ որոշ դրույթների վերանայման ուղղությամբ:

Ըստ այդմ՝ արձանագրվել են դեպքեր, երբ հավակնորդը զարգացման ծրագրի գնահատման անցողիկ շեմը հաղթահարելով՝ հարցազրույցի ժամանակ էականորեն ցածր է գնահատվում հենց զարգացման ծրագրի վերաբերյալ հարցերի շրջանակում: Նշված հանգամանքը վկայում է կամ նրա ներկայացրած զարգացման ծրագրի՝ ինքնուրույն գրած չլինելու կամ տվյալ հավակնորդի՝ հաստատությունում ուսումնական գործընթացի վերաբերյալ բավարար պատկերացում չունենալու մասին: Կարգի կիրարկման ընթացքում պարզ է դարձել, որ երբեմն առկա են զարգացման ծրագրերի բովանդակության, փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկության փոխանցման դեպքեր, ինչը հակասում է ընթացակարգի նպատակներին եւ տրամաբանությանը:

Ներկայացվող փոփոխությունների արդյունքում ավելացվել են համապատասխան դրույթներ, որոնց համաձայն՝ փորձաքննության ընթացքում զարգացման ծրագրի վերաբերյալ տվյալների փոխանցման, արտահոսքի, հրապարակման կամ հավակնորդի կամ փորձաքննող 2-րդ կազմակերպության հետ համագործակցության մասին տեղեկության առկայության կամ հարցազրույցի ընթացքում զարգացման ծրագրի բաղադրիչից բացասական գնահատվելու դեպքում կազմակերպության հետ կնքված պայմանագիրը լուծվում է:

Նախագծով առաջարկվում է զարգացման ծրագրի գնահատումը բաժանել 2 մասի՝ *«բովանդակություն»* եւ *«ինքնուրույն աշխատանք»* բաղադրիչների՝ հաշվի առնելով, որ երբեմն հավակնորդը զարգացման ծրագրի բովանդակությունը կարողանում է ներկայացնել՝ դժվարանալով պատասխանել ընթացիկ իրավիճակային հարցերի, որոնք բխում են ներկայացրած ծրագրի տարբեր բաղադրիչներից, ինչը երբեմն ինքնուրույն գրված չլինելու մասին է վկայում:

շարունակությունը՝ էջ 3

Հայաստան - Իսպանիա

Համագործակցության հեռանկարներ՝ բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներում

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** Իսպանիայի թագավորություն կատարած այցի շրջանակում հանդիպել է Իսպանիայի գիտական հետազոտությունների գլխավոր քարտուղար **Էվա Օրտեգայի** հետ:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներում Հայաստանի եւ Իսպանիայի միջեւ համագործակցության զարգացման հնարավորություններին: Նախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է իրականացվող բարեփոխումների ընթացքը՝ ընդգծելով, որ բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտներն ինտեգրելու եւ մեկ միասնական համակարգ ու քաղաքականության ունենալու նպատակով նախորդ տարի ստեղծվել է Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե:

Նախարարը կարեւորել է երկու երկրների համապատասխան կառույցների միջեւ համագործակցությունը, որի համատեքստում պայմանավորվածություն է ձեռքբերվել ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի եւ Իսպանիայի ազգային հետազոտական խորհրդի միջեւ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին հուշագիր ստորագրելու վերաբերյալ:

Ներկայացնելով գիտության ոլորտի զարգացման պետական քաղաքականությունը՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ աշխատանքներ են տարվում ոլորտում երիտասարդների ներգրավվածությունը մեծացնելու եւ խթանելու ուղղությամբ՝ այդ համատեքստում կարեւորելով համատեղ գիտական եւ հետազոտական համատեղ աշխատանքների իրականացման հնարավորությունը:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ *«Էրազմուս»* եւ *«Հորիզոն Եվրոպա»* ծրագրերին: Կողմերը պայմանավորվել են համագործակցության ծրագրերի շրջանակում ներկայացնել համատեղ նախագծեր: Միաժամանակ ընդգծվել է, որ արդեն իսկ առկա է արդյունավետ համագործակցություն՝ շուրջ 2500 համատեղ հրապարակումներ կան հայ եւ իսպանացի գիտնականների եւ հետազոտողների միջեւ:

Նախարարն իսպանական կողմին ներկայացրել է *«Ակադեմիական քաղաք»* ծրագիրը՝ այդ համատեքստում կարեւորելով նաեւ միջբուհական համագործակցությունը եւ այդ ուղղությամբ ՏՏ, բնական գիտությունների եւ ագրոտեխնոլոգիաների ոլորտներում համատեղ աշխատանքները: Նշվել է, որ ՀՀ ուսհաստատությունները շահագրգռված են ընդլայնել Իսպանիայի Թագավորության հետ արդեն գոյություն ունեցող համագործակցության շրջանակը, ակտիվացնել փոխայցելությունները, համատեղ միջոցառումների կազմակերպումը:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ հայագիտության ոլորտում համատեղ հետազոտություններ իրականացնելու հնարավորությանը, քանի որ Մադրիդի Կոմպլուտենս համալսարանում գործում է հայագիտության ամբիոն, իսկ ազգային գրադարանում առկա են հայկական ձեռագրեր: Այդ համատեքստում նշվել է, որ հայագիտական առարկաների ուսումնասիրության համար ՀՀ ԿԳՄՍՆ-ն տրամադրում է կրթաթոշակային տեղեր:

Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարզական

Հաղթարշավը շարունակվում է

Հայաստանի սամբոյի հավաքականի անդամ **Մայիս Ներսիսյանը** ոսկե մեդալ է նվաճել Սերբիայի Նովի Սադ քաղաքում անցկացվող Եվրոպայի առաջնության մարտական սամբոյի 64 կգ քաշային կարգում: Ներսիսյանը եզրափակչում 11:0 հաշվով վստահ հաղթանակ է տարել մրցակցի նկատմամբ ու հռչակվել Եվրոպայի չեմպիոն:

Հայաստանի մյուս ներկայացուցիչներ՝ 64 կգ քաշային **Նարեկ Դալլաքյանը**, 98 կգ քաշային **Արսեն Խանջյանը**, ինչպես նաեւ մարտական սամբոյի 98 կգ քաշային **Արման Ավանեսյանը** եւ 54 կգ քաշային **Արփինե Մնացականյանն** արծաթե մեդալներ են նվաճել ու արժանացել փոխչեմպիոնի կոչմանը:

58 կգ քաշային **Կարեն Սարգսյանը**, 59 կգ քաշային **Սրբուհի Հովակիմյանը**, ինչպես նաեւ մարտական սամբոյի 71 կգ քաշային **Միեր Մերջանյանն** ու 88 կգ քաշային **Ավետիք Պողոսյանն** արժանացել են բրոնզե մեդալներին ու կանգնել են պատվո հարթակի երրորդ աստիճանին:

Նովի Սադ քաղաքում ընթացող սամբոյի Եվրոպայի առաջնության նախօրեին տեղի է ունեցել մարզաձեւի Եվրոպայի ֆեդերացիայի գործկոմի նիստը, որի շրջանակում անցկացվել են գործկոմի նոր կազմի եւ ֆեդերացիայի ղեկավար կազմի ընտրությունները:

Արդյունքում՝ Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ **Միքայել Հայրապետյանն** ընտրվել է Եվրոպայի ֆեդերացիայի փոխնախագահ:

Փոփոխություններ՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի կարգում

սկիզբը՝ էջ 2

Ըստ առաջարկվող նախագծի՝ զարգացման ծրագրի փորձաքննության արդյունքում 2 անգամ բացասական եզրակացության ստացած կամ հարցազրույցի փուլը 2 անգամ չհաղթահարած անձը տնօրենի թափուր տեղի համար կարող է դիմել գործող կարգի պահանջներին համապատասխան՝ զարգացման նոր ծրագիր ներկայացնելու դեպքում, ինչը հավակնորդին գործընթացին պատասխանատվությամբ վերաբերվելու եւ բավարար կարողություններ ձեռք բերելու կամ զարգացնելու դրդապատճառ կհանդիսանա:

Բացի այդ, դրույթներ են ավելացվել այն մասին, որ քվեարկությանը մասնակցած բոլոր անդամների դրական եզրակացության դեպքում հավակնորդը տնօրենի պաշտոնում նշանակվում է առանց փորձաշրջանի, իսկ հարցազրույցի փուլը հաղթահարելու արդյունքում առնվազն մեկ բացասական եզրակացության ունենալու դեպքում՝ 1 տարի փորձաշրջանով: Փորձաշրջանի ընթացքում կազմակերպական, մասնագիտական կամ աշխատանքային այլ գործունեությանն աջակցելու նպատակով նշանակվում է փորձաշրջանի ղեկավար, որը նախարարի հրամանով ընտրված մենթոր դպրոցի տնօրեն է: Փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, տնօրենը մասնագիտական հանձնաժողովի եւ հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանն է ներկայացնում իր կազմած զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը՝ սահմանված ձեւաչափին համապատասխան: Փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ղեկավարը մասնագիտական հանձնաժողովին է ներկայացնում տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը՝ համաձայն առաջարկվող ձեւաչափի, որտեղ չափանիշների մասով նշում է կատարվում: Գնահատողի եզրակացությամբ՝ փորձաշրջանն անցած կհամարվի 20 եւ ավելի միավոր ստացած տնօրենը:

Մասնագիտական հանձնաժողովի եւ խորհրդի կողմից հաշվետվության դրական եզրակացությունների եւ ղեկավարի դրական եղրակացության արդյունքում տնօրենը համարվում է փորձաշրջանն անցած: Ներկայացրած կատարողական հաշվետվությունների բացասական եզրակացությունների կամ ղեկավարի բացասական գնահատման դեպքում տնօրենը չի համարվում փորձաշրջանն անցած, որի մասին հանձնաժողովը գրավոր տեղեկացնում է համապատասխան լիազոր մարմնին՝ 5 աշխատանքային օրվա ընթացում պայմանագիրը լուծելու համար:

Առաջարկվող լուծումները միտված են գործընթացում նկատված բացերի շտկմանը, տնօրենների նշանակման ընթացակարգում օբյեկտիվության, անաչառության եւ թափանցիկության ապահովման բարձրացմանը: Դրանով նախատեսվում է տնօրենի նշանակման եռափուլ համակարգի գործարկումն ամբողջացնել՝ շեշտը դնելով ոչ միայն հաստատությունում բովանդակային մասի կառավարման վերաբերյալ հավակնորդի կարողությունների ստուգման, այլ նաեւ գործնականում այն հաստատությունում կիրառելու մասի վրա:

Նախագծով առաջարկվող փոփոխությունները թույլ կտան տնօրենի նշանակումից հետո, ըստ անհրաժեշտության, ի դեմս մենթոր դպրոցի՝ հիմքեր ստեղծել հաստատությունում կրթության կազմակերպումը տարեցտարի որակապես փոխելու՝ ապահովելով տվյալ դպրոցում կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ նախապայմանները: Կկարգավորվի նաեւ տնօրեն դառնալու բազմակի փորձ կատարած եւ հաջողություն չգրանցած հավակնորդների դիմելու հարցը՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր զարգացման ծրագրի փորձաքննության համար պետական բյուջեի միջոցներից հատկացվում է գումար:

Հեղինե ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախադպրոցական

Կբարելավվեն համալիր ծրագրերը

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին»* ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Համաձայն հիմնավորման՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ներդրման նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր խմբերի համար: Վերոնշյալ ծրագրերը 2022-2023 ուսումնական տարում փորձարկվել են հանրապետության 60, իսկ 2023-2024 ուստարում՝ եւս 130 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Չափորոշչի ներդրման ընթացքում իրականացված մշտադիտարկումների եւ վերլուծության, ինչպես նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական համակազմերից ստացված դիտարկումների հիման վրա կատարվել են մի շարք բովանդակային փոփոխություններ՝

- նախադպրոցական կրթության ավարտին ակնկալվող կարողունակությունները եւ վերջնարդյունքները տարանջատվել են, կարողունակությունները խմբագրվել են,

- ոլորտային վերջնարդյունքները լրամշակվել են, քանի որ շարժողական ոլորտում ներառված չէին մանր շարժումների վերաբերյալ վերջնարդյունքներ՝ ըստ տարիքային խմբերի,

-չափորոշչում արտացոլվել է պարապմունքների քանակը (հիմնական եւ լրացուցիչ)՝ ըստ տարիքային խմբերի:

Տարակարգ

Փոփոխություններ՝ շնորհման կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձեւավորման եւ գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգում փոփոխություններ կատարելու մասին Կառավարության որոշման նախագիծը:

Մասնավորապես՝ գործող կարգում տարակարգի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները հստակեցվել են եւ սահմանվել անհրաժեշտ նյութերին ներկայացվող նոր պահանջներ: Միաժամանակ, գործող կարգում սահմանված չէ, թե արդյոք հանրապետական հանձնաժողովն իրավունք ունի ուսուցչին տալու դիմածից բարձր կամ ցածր աստիճանի տարակարգ: Հանրապետական հանձնաժողովի որոշման բողոքարկման համար սահմանվել է հստակ ժամկետ՝ որոշման մասին գրավոր տեղեկացվելուց հետո 5 աշխատանքային օր: Ավելացվել է նաեւ դրույթ, որ էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո տարակարգի հայտերը կներկայացվեն Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ:

Միաժամանակ սահմանվել է, որ հունիս-սեպտեմբեր ամիսներին տարակարգի համար դիմելու դեպքում ուսուցիչը ներկայացնում է մայիս ամսվա ընթացքում կազմված դասի պլանները: Նախագծով առաջարկվում է նաեւ առաջին աստիճանի տարակարգ շնորհել ուսուցչի մասնագիտական չափանիշներից բխող զարգացման ոլորտներից յուրաքանչյուրից 80-89% արդյունք ապահովելու դեպքում, իսկ երկրորդ աստիճանի՝ 90-100 % արդյունք ցուցաբերելու դեպքում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շառլ Ազնավուր - 100

Արարատի մարզի 14 դպրոցների մասնակցությամբ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** Արտաշատի Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոնում ներկա է եղել Հայաստանի ազգային հերոս, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանակիր, աշխարհահռչակ շանսոնյե, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառմանը:

Ցերեկույթին մասնակցել են Արարատի մարզի 14 դպրոցներ, որոնցում դասավանդվում է ֆրանսերեն:

Դպրոցականները հյուրերին նախասրահում դիմավորել են երաժշտական կատարումներով եւ նկարչական աշխատանքների ցուցահանդեսով՝ աշխարհահռչակ շանսոնյեին նվիրված:

Բեմում, ներկայացման ձեւաչափով, դպրոցների սաները հայերեն եւ ֆրանսերեն ներկայացրել են դրվագներ Շառլ Ազնավուրի կյանքից եւ ստեղծագործական գործունեությունից, հանդես եկել նրա հեղինակած ստեղծագործություններով, ներկայացրել պարային եւ վոկալ կատարումներ:

Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին՝ նշելով, որ Կառավարության կողմից ձեւավորվել է հոբելյանական հանձնաժողով, եւ ողջ տարվա ընթացքում Հայաստանում եւ արտերկրում իրականացվելու են բազմաթիվ միջոցառումներ: *«Անդրադառնալու ենք Շառլ Ազնավուրի ժառանգությանը, այն արժեքներին, որը նա թողել է եւ, որը մենք պետք է շարունակենք»,*- ասել է նախարարը: Նա ընդգծել է, որ մշտապես ուշադրությամբ է հետեւում այն միջոցառումներին, որոնք կազմակերպում են մարզային դպրոցները:

«Այնքան կարեւոր է, որ մենք խրախուսենք երեխաներին ներկայացնելու իրենց գաղափարներն ու մոտեցումները: Մեծահասակների կողքին երեխաներն իրենց տեսանկյունից պետք է խոսեն իրադարձությունների եւ մարդկանց մասին, ինչը կօգնի նրանց շարունակել պատմությունը եւ պահպանել մշակութային ժառանգությունը»,- ասել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ նախաձեռնության ձեւաչափին՝ մեկ գաղափարի շուրջ համախմբված եւ 14 դպրոցների համատեղ ջանքերով կազմակերպած միջոցառմանը՝ նշելով, որ այս համագործակցությունն արժանի է մեծ գնահատանքիգ *«Կարեւոր է, որ դպրոցներն աշխատեն միասին, համախմբվեն ընդհանուր գաղափարների շուրջ եւ իրականացնեն դրանք»:*

Ազնավուրի 100-ամյակի հոբելյանական միջոցառմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը,** ՀՀ Արարատի մարզպետ **Սեդրակ Թեւոնյանը,** ՀՀ նախագահի խորհրդական **Վահրամ Դումանյանը:**

Հանրակրթություն

Ընդունելության եւ տեղափոխության հստակեցում

ԿԳՄՍ նախարարի հրամանով փոփոխություններ են կատարվել *«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգում»:*

Ըստ այդմ՝ սահմանվել է.

- այս սեպտեմբերին՝ *2024-2025 ուսումնական տարում, առաջին դասարան կհաճախեն այն երեխաները, որոնց 6 տարին լրանում է մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ,*

- այս սեպտեմբերին՝ *2024-2025 ուսումնական տարում, առաջին դասարան կհաճախեն նաեւ այն երեխաները, որոնք սահմանված ժամկետում դպրոց չեն հաճախել, եւ մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը լրանում է նրանց 7 եւ 8 տարին,*

- հաջորդ սեպտեմբերից՝ *2025-2026 ուսումնական տարվանից սկսած՝ մինչեւ տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ, 7 եւ 8 տարին լրանալու դեպքում դպրոց չհաճախած երեխաները կընդունվեն տարիքային խմբին համապատասխան դասարան, այսինքն՝ համապատասխանաբար 2-րդ եւ 3-րդ դասարաններ՝ ընդհանուր հիմունքներով:*

Եթե որեւէ պատճառով 9-ից բարձր տարիքի երեխան առհասարակ դպրոց չի հաճախել, ապա նրա ընդգրկումը հանրակրթության մեջ կատարվում է՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանով հաստատված կարգի:

Սահմանվել է նաեւ, որ հանրակրթական հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի տեղափոխումը կատարվում է գործող կարգի պահանջներին համապատասխան, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով՝ հետեւյալ սկզբունքով.

ա) 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան (առանց նախարարության գրավոր համաձայնության).

բ) 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան (առանց նախարարության գրավոր համաձայնության).

գ) 3-րդ, 4-րդ (առկայության դեպքում՝ 5-րդ) կուրսերից՝ 12-րդ դասարան՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու կամ սովորողի մասնագիտական կրթության ուղղությամբ ՆՄՄԿ հաստատություն չունեցող կամ ՆՄՄԿ հաստատություն չունեցող բնակավայր տեղափոխման դեպքում:

3-րդ, 4-րդ (առկայության դեպքում՝ 5-րդ) կուրսերից տեղափոխման հնարավորությունն ընձեռվում է՝ հաշվի առնելով սովորողի պարտադիր կրթության շարունակականության ապահովման անհնարինության դեպքերը (օրինակ՝ վարքի կամ բացակայությունների պատճառով ՆՄԿՈՒ հաստատություններից հեռացման կամ անվճար համակարգից վճարովի համակարգ առաջադիմության հետ կապված տեղափոխությամբ պայմանավորված վճարունակ չլինելու հանգամանքը):

Այս դեպքերում տեղափոխությունն իրականացվում է հիմնավոր պատճառների վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու եւ դրական դիրքորոշում ստանալուց հետո:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համադպրոցական գիտության փառատոն

Մասնակիցներին պարգեւատրել է Նախարարը

«Դպրոցականների հետ գիտության մասին խոսելը ձեռքբերում է: Այն գաղափարներն ու նախագծերը, որոնց ականատես եղանք համադպրոցական գիտության փառատոնում, ցույց են տալիս, որ գործ ունենք հասուն, սեփական միտք ու դիրքորոշում ունեցող մարդկանց հետ: Արդյունքները վստահություն են ներշնչում, որ կրթության համակարգում ճիշտ գործընթացներ են իրականացվում. ձեւավորվել է այն միջավայրը, որտեղ երեխաները կարողանում են իրենց գաղափարներն առաջ քաշել եւ աշխատել դրանց շուրջ: Այդ ճանապարհին կարեւոր է հատկապես դպրոցների աջակցությունը, քանի որ ուսուցիչների ճիշտ ուղեկցումն է երեխաներին հասցնում ցանկալի արդյունքի»,- ասել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** Երեւանի պետական համալսարանում տեղի ունեցած՝ Հայկական համադպրոցական գիտության փառատոնի մասնակիցների պարգեւատրման ժամանակ: Միջոցառմանը ներկա է եղել նաեւ ԵՊՀ ռեկտոր **Հովհաննես Հովհաննիսյանը:**

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով փառատոնին մասնակցող դպրոցականներին, շեշտել է, որ Համադպրոցական գիտության փառատոնն իր ամենասիրելի միջոցառումներից է: Ըստ նախարարի՝ փառատոնը պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով ավելի մեծ թվով եւ աշխարհագրությամբ դպրոցներ, ներառելով գիտակարգերի ավելի լայն շրջանակ: Ժաննա Անդրեասյանը հաջողություն է մաղթել Համադպրոցական գիտության փառատոնի այն մասնակիցներին, որոնք հնարավորություն են ստացել մասնակցելու Լեհաստանում կայանալիք միջազգային փառատոնին: Նա նաեւ շնորհակալություն է հայտնել փառատոնի գործընկերներ կազմակերպություններին, մասնավորապես՝ *«Արփա»* ինստիտուտին, որի հետ համագործակցությամբ է մեկնարկել եւ կայացել փառատոնը: Նմանօրինակ նախագծերի իրականացման նպատակով, ըստ Ժաննա Անդրեասյանի, նախարարությունը բաց է համագործակցության համար:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը շեշտել է, որ երկրորդ տարին անընդմեջ ԵՊՀ-ն հյուրընկալում է Համադպրոցական գիտության փառատոնի մասնակիցներին, որոնք նոր գաղափարներ են բերում՝ հույս հայտնելով, որ նրանցից շատերը կդառնան ԵՊՀ ուսանողներ. *«Համադպրոցական գիտության փառատոնում ներկայացված նախագծերը կրթական բարեփոխումների տեսանելի արդյունքներն են»:*

ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից իրականացվող Հայկական համադպրոցական գիտության փառատոնի նպատակն է դպրոցահասակ երիտասարդների շրջանում գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության սերմանումը, խմբային աշխատանքի, նորարարական նախագծերի իրականացման եւ դրանց ներկայացման հմտությունների զարգացումը:

2024 թ. փառատոնին *«Մաթեմատիկա եւ ծրագրավորում» «Ֆիզիկա եւ աստղագիտություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հասարակական գիտություններ»* անվանակարգերում ներկայացվել է շուրջ 80 նախագիծ: 2024 թ. փառատոնի ընթացքում 5 տարբեր անվանակարգերում 23 նախագիծ արժանացել է 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի մրցանակների, որոնցից 3 նախագիծ՝ *«Մաթեմատիկա եւ ծրագրավորում»*, 5 նախագիծ՝ *«Ֆիզիկա եւ աստղագիտություն»*, 4 նախագիծ՝ *«Քիմիա»*, 6 նախագիծ՝ *«Կենսաբանություն»* եւ 5 նախագիծ՝ *«Հասարակական գիտություններ»* անվանակարգերում: 12 նախագիծ արժանացել է պատվոգրի, 3 նախագիծ հնարավորություն է ստացել մասնակցելու միջազգային մրցույթի:

«Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2024»-ում ներկայացված ԵՊԲՀ *«Հերացի»* ավագ դպրոցի *«Մելատոնինի ու լիպոյաթթվի ազդեցությունը քաղցկեղածին բջիջների վրա»*, Վանաձորի Ա. Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի *«Խիտոզան՝ ապագայի պոլիմեր»* եւ Երեւանի *«Այբ կրթական հանգույց»* հիմնադրամի *«Ծանր մետաղները ջրում»* նախագծերը հնարավորություն են ստացել մասնակցելու *«Երիտասարդ գիտնականների համար ԵՄ մրցույթին (EUCYS: The European Union Contest for Young Scientists)»*, որը տեղի կունենա Լեհաստանի Կատովիցե քաղաքում, սեպտեմբերի 9-14-ը:

Բարի լուր

Հայ դպրոցականները 10 մեդալ են նվաճել Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայում

ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցանակակիրներին կտրամադրվի անվանական կրթաթոշակ: Օլիմպիադան անցկացվել է 2024թ. ապրիլի 16-21-ը, Բուլղարիայում:

Այս օլիմպիադան անցկացվում է տարիքային երկու խմբով: Ավագ խմբում մասնակցել է 16 երկրի 287 դպրոցական, իսկ կրտսեր (մինչեւ 15 տարեկան) խմբում՝ 191 դպրոցական: Հայաստանից մրցույթին մասնակցել է 24 դպրոցական՝ 16-ն ավագների խմբում, 8-ը՝ կրտսերների: Օլիմպիադային մասնակցել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի, *«Քվանտ»* վարժարանի եւ Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի աշակերտները: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի դպրոցականները Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայում նվաճել են 10 մեդալ՝ 3 արծաթ եւ 7 բրոնզ:

Նշենք, որ կրթաթոշակները տրամադրվում են՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մայիսի 12-ի 52-Ն հրամանով հաստատված *«Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման»* կարգի: Ըստ այդմ՝ եթե սովորողը միաժամանակ երկու կամ երեք հիմքով է ընդգրկվում կրթաթոշակ ստացողների ցանկում, ապա նա կարող է ստանալ դրանց հանրագումարի չափով կրթաթոշակ: Անվանական կրթաթոշակը սովորողներին տրվում է հաստատությունների միջոցով՝ մեկ տարվա հաշվարկով, իսկ ուսումնառությունը տվյալ հաստատությունում դադարելու դեպքում մեկ տարվա համար նախատեսված կրթաթոշակի չվճարված մասը սովորողին վճարվում է միանվագ:

Առարկայական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են հետեւյալ կրթաթոշակները.

1) ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերի դիպլոմակիրներ, որոնց տրվում է անվանական կրթաթոշակ՝ ամսական հետեւյալ չափով.

- առաջին կարգի դիպլոմակիրներին՝ 10000 դրամ,

- երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ 7500 դրամ,

- երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ 5000 դրամ,

2) դպրոցականների միջազգային առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մրցանակակիրներ կամ մասնակիցներ, որոնց տրվում է անվանական կրթաթոշակ՝ ամսական հետեւյալ չափով.

- առաջին կարգի դիպլոմակիրներին (ոսկե մեդալակիր)՝ 25000 դրամ,

- երկրորդ կարգի դիպլոմակիրներին (արծաթե մեդալակիր)՝ 20000 դրամ,

- երրորդ կարգի դիպլոմակիրներին (բրոնզե մեդալակիր)՝ 15000 դրամ,

- գովասանագրով պարգեւատրվածներին՝ 12000 դրամ,

- եզրափակիչ փուլի այլ մասնակիցներին՝ 10000 դրամ:

3) դպրոցականների միջազգային այլ օլիմպիադաների (առնվազն 15 երկրներից մասնակիցներ ունեցող) եզրափակիչ փուլերի մրցանակակիրներ, որոնց տրվում է անվանական կրթաթոշակ՝ ամսական հետեւյալ չափով.

- առաջին կարգի դիպլոմակիրներին (ոսկե մեդալակիր)՝ 15000 դրամ,

- երկրորդ կարգի դիպլոմակիրներին (արծաթե մեդալակիր)՝ 10000 դրամ,

- երրորդ կարգի դիպլոմակիրներին (բրոնզե մեդալակիր)՝ 7500 դրամ:

Արտադպրոցական

Հաստատվել է կամավոր ատեստավորման ժամանակացույցը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել է պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների 2024 թվականի կամավոր ատեստավորման ժամանակացույցը:

Մայիսի 18-ին ատեստավորումը կիրականացվի՝ հետեւյալ ուղղություններով՝

- Դաշնամուր (1-ին խումբ) - Երեւանի թիվ 155 հիմնական դպրոցում:

- Դաշնամուր (2-րդ խումբ), սոլֆեջո, երաժշտական գրականություն (երաժշտության բաժին), երաժշտական գրագիտություն (պարարվեստի, թատերարվեստի բաժին) - Երեւանի թիվ 190 ավագ դպրոցում:

- Քանոն, թառ, ուդ, քամանչա, դհոլ, ջութակ, թավջութակ, դուդուկ, սրինգ, բլուլ, շվի - Երեւանի թիվ 6 հիմնական դպրոցում:

- Կերպարվեստի հիմունքներ եւ նկարչություն, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, քանդակ, ծեփագործություն, կիրառական արվեստի հիմունքներ, գորգագործություն, կարպետագործություն, գոբելեն, խեցեգործություն, ասեղնագործություն, տիկնիկագործություն - Երեւանի թիվ 135 հիմնական դպրոցում:

Մայիսի 19-ին ատեստավորումը կիրականացվի հետեւյալ ուղղություններով՝

- Ծանրամարտ, աթլետիկա, հրածգություն, կարատե - Երեւանի թիվ 155 հիմնական դպրոց:

- Բասկետբոլ, սամբո, սեղանի թենիս, ազատ ոճի ըմբշամարտ -Երեւանի թիվ 135 հիմնական դպրոց:

- Բռնցքամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ձյուդո, դահուկավազք - Երեւանի թիվ 190 ավագ դպրոց:

Ատեստավորման օրը մանկավարժական աշխատողը քննական կենտրոն պետք է ներկայանա ժամը 10:00-ին՝ իր հետ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ:

Հ. Հ.

Աշխարհի հետ

Հայաստանյան փորձը միջազգային գործընկերների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացրել

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանն** Ավստրիայում մասնակցել է Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված *«Ուսուցիչները կրթության փոխակերպման կենտրոնում»* ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումներին եւ գիտաժողովին:

Համաժողովի ընթացքում ներկայացվել են մի շարք ելույթներ՝ ուղղված ուսուցիչների դերին, քաղաքականության եւ մասնագիտական զարգացման պայմաններին առնչվող տարատեսակ մարտահրավերներին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը աշխատաժողովի շրջանակում կազմակերպված պանելային քննարկմանը ներկայացրել է ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ հանրակրության պետական չափորոշչի ներդրման գործընթացը, դպրոցների կառավարման համակարգի փոփոխությունը: Նա, մասնավորապես, անդրադարձել է ուսուցիչների մասնագիտական զարգացման նոր՝ փոփոխված համակարգին՝ կարեւորելով յուրաքանչյուր ուսուցչի կարիքի վրա հիմնված վերապատրաստման եւ ատեստավորման գործընթացի կազմակերպումը:

Նրա խոսքով՝ հայաստանյան փորձը միջազգային գործընկերների շրջանում բավականին մեծ հետաքրքրություն է առաջացրել:

Ներկայացված զեկույցներն ու քննարկումները հնարավորություն են տվել ծանոթանալու տարբեր երկրներում ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված քաղաքականություններին, ուսուցիչների եւ դպրոցների տնօրենների մասնագիտական զարգացման վերաբերյալ հետազոտություններին:

(էքստեռն) ավարտական

Հայտնի են քննությունների օրերը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ հաստատվել են 2024 թվականի 2-րդ քննաշրջանի դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը եւ ժամանակացույցը:

Ըստ այդմ՝ 2-րդ քննաշրջանի համար դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կանցկացվեն 2024 թվականի հունիսի 3-ից մինչեւ հուլիսի 2-ը ներառյալ՝ Երեւանի թիվ 198 ավագ դպրոցում (Նոր Նորք վարչական շրջան, 9-րդ զանգված, Վիլնյուսի 13/1):

Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2024 թվականի 2-րդ քննաշրջանի ընթացքում *«Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Համաշխարհային պատմություն»* առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ *«Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն»* (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), *«Օտար լեզու»* (*«Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»,* այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), *«Հայոց պատմություն», «Գրականություն», «Ռուսաց լեզու»* առարկաների քննությունները՝ բանավոր:

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2024 թվականի 2-րդ քննաշրջանի ընթացքում *«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Ռուսաց լեզու», «Համաշխարհային պատմություն»,* Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ *«Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն»* (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները՝ բանավոր:

«Ֆիզկուլտուրա» առարկայի քննության անցկացման եղանակը ստուգարքն է (նորմատիվների հանձնում):

Գրավոր քննական թեստերը կազմում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը (ԳԹԿ)՝ յուրաքանչյուր առարկայից առնվազն 4 թեստ՝ գնահատման 20 բալային համակարգով: Բանավոր քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

2024 թվականի 2-րդ քննաշրջանի դրսեկության ձեւով (էքստեռն) քննությունները կանցկացվեն՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

Հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում են տարեկան գնահատականներ:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետեւյալ սանդղակի՝

8 - 9 միավոր - 4
10 - 11 միավոր - 5
12 - 13 միավոր - 6
14 - 15 միավոր - 7
16 -17 միավոր - 8
18 -19 միավոր - 9
20 միավոր - 10

Դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու եւ անցկացնելու գործընթացը համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

«Թանգարաններ, կրթություն եւ հետազոտություն»

118 թանգարաններ նշում են Թանգարանների միջազգային օրն ու *«Թանգարանների գիշեր»* միջոցառումը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2024 թվականի մայիսի 18-ին հրավիրում է նշելու Թանգարանների միջազգային օրն ու մասնակցելու *«Թանգարանների գիշեր»* համաեվրոպական միջոցառմանը: Այդ օրը ծրագրին միացած 118 թանգարանները բոլոր այցելուների համար անվճար սկզբունքով բաց կլինեն ժամը 11:00-ից 24:00-ն:

Յուրաքանչյուր տարի Թանգարանների միջազգային օրվա շրջանակում թանգարանները, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, համախմբվում են մեկ խորագրի շուրջ՝ ներկայանալով համահունչ միջոցառումներով, ցուցահանդեսներով եւ կրթական ծրագրերով՝ ընդգծելով թանգարանների ներդրումը հասարակության ներդաշնակ եւ կայուն զարգացման գործընթացներում:

Այս տարի Թանգարանների միջազգային օրն անցկացվելու է *«Թանգարաններ, կրթություն եւ հետազոտություն»* խորագրով, որն արտացոլում է թանգարանների առանցքային դերը՝ որպես կրթության եւ հետազոտության կենսունակ տարածքներ, որոնք խթանում են նորարարական հետազոտությունները եւ բացահայտումները:

Թանգարանների միջազգային խորհուրդը, որպես 2024 թվականի միջազգային օրվա հիմնական ուղերձներ, սահմանել է կրթության հզորացումը, հետազոտական համագործակցությունը, թվային ուսումնառության միջավայրը, ներառական նախաձեռնությունները եւ համընդհանուր ժառանգության պահպանությունը:

Հայաստանում 2024 թվականը նշանակալից էր թանգարանների ոլորտի բարեփոխումներով. ընդունվել է *«Թանգարանների մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքը, որով առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցել է հիմնարար մայր օրենք: Հատկանշական է, որ *«Թանգարանների մասին»* ՀՀ օրենքում թանգարանային կրթության բաղադրիչն ամրագրված է որպես պարտադիր գործառույթ:

Կարեւոր բարեփոխումներ են տեղի ունեցել թանգարանների կառավարման ոլորտում: Ստեղծվել է *«Մշակույթի զարգացման»* հիմնադրամը, որի գործունեությունը միտված է նպաստելու թանգարանների կրթական ներուժի զարգացմանը, կրթական եւ հետազոտական առաքելության արժեւորմանը: Յուրաքանչյուր տարի հայաստանյան թանգարաններն իրականացնում են բազմաբնույթ կրթական եւ հետազոտական ծրագրեր՝ նախատեսված տարբեր տարիքային եւ սոցիալական լսարանների համար: 2023 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններում իրականացվել է շուրջ 1250 կրթական ծրագիր, որին մասնակցել է 30 600 այցելու:

«Թանգարանների գիշեր» ծրագրին միացած 118 թանգարաններ՝ որպես մշակութային երկխոսության հարթակներ, բազմաբովանդակ միջոցառումներով մայիսի 18-ին իրենց դռները կբացեն հասարակության առջեւ: Մեկ անգամ եւս կվերահաստատվի թանգարանների կարեւոր առաքելությունը նորօրյա մարտահրավերների դիմագրավման, մշակութային ժառանգության պահպանության եւ բարեկեցիկ հասարակությունների ձեւավորման համատեքստում:

Հիշեցնենք, որ Թանգարանների միջազգային օրը հռչակվել է 1977 թվականին, Թանգարանների միջազգային խորհրդի կողմից (ԻԿՕՄ)՝ նպատակ ունենալով համախմբել թանգարանները հասարակության եւ մարդկության առջեւ ծառացած գլոբալ մարտահրավերների շուրջ, միաժամանակ բարձրացնել հանրային իրազեկվածությունը՝ մարտահրավերների դիմագրավման, թանգարանների կարեւորագույն դերի եւ հնարավորությունների մասին:

«Թանգարանների գիշեր» ծրագիրը անցկացվում է 2005 թվականից Ֆրանսիայի մշակույթի եւ հաղորդակցության նախարարության նախաձեռնությամբ՝ ԻԿՕՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Եվրախորհրդի հովանավորությամբ: Հայաստանը միացել է *«Թանգարանների գիշեր»* համաեվրոպական միջոցառմանը՝ 2005 թվականից:

սումնառության միջավայրը, ներառական նախաձեռնությունները եւ համընդհանուր ժառանգության պահպանությունը:

Հայաստանում 2024 թվականը նշանակալից էր թանգարանների ոլորտի բարեփոխումներով. ընդունվել է *«Թանգարանների մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքը, որով առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցել է հիմնարար մայր օրենք: Հատկանշական է, որ *«Թանգարանների մասին»* ՀՀ օրենքում թանգարանային կրթության բաղադրիչն ամրագրված է՝ որպես պարտադիր գործառույթ:

Կարեւոր բարեփոխումներ են տեղի ունեցել թանգարանների կառավարման ոլորտում: Ստեղծվել է *«Մշակույթի զարգացման»* հիմնադրամը, որի գործունեությունը միտված է նպաստելու թանգարանների կրթական ներուժի զարգացմանը, կրթական եւ հետազոտական առաքելության արժեւորմանը:

Յուրաքանչյուր տարի հայաստանյան թանգարաններն իրականացնում են բազմաբնույթ կրթական եւ հետազոտական ծրագրեր՝ նախատեսված տարբեր տարիքային եւ սոցիալական լսարանների համար:

2023 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններում իրականացվել է շուրջ 1250 կրթական ծրագիր, որին մասնակցել է 30 600 այցելու:

«Թանգարանների գիշեր» ծրագրին միացած 118 թանգարաններ՝ որպես մշակութային երկխոսության հարթակներ, բազմաբովանդակ միջոցառումներով մայիսի 18-ին իրենց դռները կբացեն հասարակության առջեւ: Մեկ անգամ եւս կվերահաստատվի թանգարանների կարեւոր առաքելությունը նորօրյա մարտահրավերների դիմագրավման, մշակութային ժառանգության պահպանության եւ բարեկեցիկ հասարակությունների ձեւավորման համատեքստում:

Հիշեցնենք, որ Թանգարանների միջազգային օրը հռչակվել է 1977 թվականին Թանգարանների միջազգային խորհրդի կողմից (ԻԿՕՄ)՝ նպատակ ունենալով համախմբել թանգարանները հասարակության եւ մարդկության առջեւ ծառացած գլոբալ մարտահրավերների շուրջ, միաժամանակ բարձրացնել հանրային իրազեկվածությունը՝ մարտահրավերների դիմագրավման, թանգարանների կարեւորագույն դերի եւ հնարավորությունների մասին:

«Թանգարանների գիշեր» ծրագիրն անցկացվում է 2005 թվականից Ֆրանսիայի մշակույթի եւ հաղորդակցության նախարարության նախաձեռնությամբ՝ ԻԿՕՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Եվրախորհրդի հովանավորությամբ: Հայաստանը միացել է *«Թանգարանների գիշեր»* համաեվրոպական միջոցառմանը՝ 2005 թվականից:

Ճանաչի՛ր, որ սիրես

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ «Կրթություն», թիվ 17-18 համարում

Արուճի Տաճար (Սուրբ Գրիգոր եկեղեցի)



Արագածոտնի մարզի Արուճ գյուղը գտնվում է Երեւանից մոտ 50 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորությամբ, իսկ մարզկենտրոն Աշտարակից մոտ 25 կմ հարավ-արեւմուտք: Հայ մատենագրության մեջ Արուճ տեղանունն առաջին անգամ հիշատակում է V դ. պատմիչ Եղիշեն: Նրա վկայությամբ՝ Արշակունիների օրոք Արուճը եղել է արքունական բանակի ձմեռանոցներից մեկը: Սակայն Արուճի վերելքը պայմանավորված էր Հայոց իշխան (661–685 թթ.) Գրիգոր Մամիկոնյանի գործունեությամբ, երբ ավանը դարձավ Հայաստանի կառավարչի՝ Հայոց իշխանի նստավայրը: Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին հայ պատմիչները ներկայացնում են որպես կարգ ու կանոնի պահապան, բարեպաշտ առաջնորդ:

Արուճ գյուղում է գտնվում վիմագրերում Կաթողիկե անունով հիշատակվող, իսկ ավելի ուշ, գրականության մեջ, Սուրբ Գրիգոր կոչվող եկեղեցին, որը կառուցել է Գրիգոր Մամիկոնյանը: Ըստ արեւելյան պատին պահպանված շինարարական արձանագրութ-յան՝ եկեղեցու կառուցումը սկսվել է 662 թվականին: Չորս տարի անց նորակառույց եկեղեցին օծել է Անաստաս Ա. Ակոռեցի կաթողիկոսը (661–667 թթ.):

Արուճի եկեղեցին *«գմբեթավոր դահլիճ»* տիպի, միասնական ու վեհաշուք ներքին տարածությամբ կառույց է, արեւելյան կողմում ունի երկու ավանդատուն: Միջնադարյան Հայաստանի *«գմբեթավոր դահլիճ»* տիպի եկեղեցիների շարքում այն ամենամեծն է եւ ն-շանավոր է թե՛ իր ճարտարապետությամբ, թե՛ կառույցին ժամանակակից որմնանկարներով: Եկեղեցին լուսավորվել է 41 պատուհաններից եւ երեք լայնադիր դռներից ներթափանցող առատ լույսով: Եկեղեցուն ժամանակակից եւ կառույցին առանձնահատուկ հանդիսավորություն հաղորդող հոյակերտ որմնանկարներից պահպանվել են միայն հատվածներ ավագ խորանում:

XV դ. Խաչատուր վարդապետը նորոգել է եկեղեցին: XVI–XIX դդ. եկեղեցին կիսա-վեր էր եւ լքված: 1946 թ. նորոգվել են եկեղեցու հարավային եւ արեւմտյան պատերի քանդված հատվածները, վերանորոգվել՝ քիվերը եւ տանիքը: 1958–1959 թթ. ամրացվել է եկեղեցու աղոթասրահի արեւմտյան կողմի թաղը: Հետագայում եկեղեցին եւ շրջակա տարածքը ենթարկվել են բարեկարգման:

Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը Արուճի Սուրբ Գրիգոր եկեղեցու հարավային կողմում կառուցել է իր ապարանքը: 1947–1952 թթ. իրականացված պեղումների (ղեկավար՝ Վ. Հարությունյան) արդյունքում եկեղեցու հարավային կողմում բացվել է Գրիգոր Մամիկոնյանի կառուցած պալատը: Բուն պալատը սյունազարդ դահլիճն է, ուր այժմ էլ կարելի է տեսնել գահասրահը զարդարող երկու հսկա քանդակազարդ խոյակներ: Դահլիճը կրկնում է Դվինի կաթողիկոսարանի հորինվածքը, սակայն թեեւ ունի նույն լայնությունը, բայց զիջում է երկարությամբ: Գրիգոր Մամիկոնյանը պատվիրել է այնպիսի պալատ կառուցել, որը նման կլիներ Դվինի կաթողիկոսարանին:

2006 թ. պեղումների ժամանակ պարզվեց, որ սյունազարդ դահլիճից բացի, պալատական համալիրի մաս համարված մեծ դահլիճն իրականում Արուճի վաղ միջնադարյան եռանավ բազիլիկ եկեղեցին է, որը ուշ շրջանում արեւելյան կողմից վերակառուցման է ենթարկվել: Բազիլիկի հարեւանությամբ գտնվում է փոքր մատուռ, ինչպես նաեւ քառանիստ կոթող, որի քանդակազարդ խոյակը հայտնաբերվել է վերը նշված պեղումների ժամանակ:

Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցի

Արագածոտնի մարզի Բյուրական գյուղը գտնվում է մայրաքաղաք Երեւանից մոտ 40 կմ, իսկ Աշտարակ քաղաքից մոտ 15 կմ հյուսիս-արեւմուտք, ծովի մակարդակից շուրջ 1475 մ բարձրության վրա: Գյուղի մասին առաջին գրավոր հիշատակությունը թողել է X դ. պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը, որը, գնելով Բյուրականը, դարձրել է իր դաստակերտը, այնտեղ կառուցել վանք ու հաստատել կուսակրոնների միաբանություն:

Սուրբ Հովհաննես եկեղեցին նախնական հորինվածքով եղել է ուղղանկյուն հատակագծով *«թաղածածկ դահլիճ»* (միանավ բազիլիկ) տիպի կառույց: Ճարտարապետական առանձնահատկությունների վերլուծության հիման վրա մասնագետները եկեղեցու կառուցումը թվագրում են IV–VI դարերով: Հավանական է, որ VII դարում վերաշինվել է, իսկ հետագայում բազմիցս նորոգվել: Վաղ միջնադարյան Հայաստանի այն եկեղեցիներից է, որը չի ավերվել ու պահպանել է բացառիկ ճարտարապետական մանրամասներ, մասնավորապես՝ պատուհանի ծակոտկեն քարե ծածկերը: Ունի երկու մուտք՝ արեւմտյան եւ հարավային պատերի կենտրոնական մասում:

Ճակատները մշակված են պսակազարդ բոլորաձեւ եւ երկարավուն լուսամուտներով: Պահպանվել են նրանցից մի քանիսի քարե նախնական ցանցերը, որպիսին ունեցել է Զվարթնոցը: Արեւելյան ճակատը մշակված է խոյակավոր որմնասյուների կամարաշարով: Հարդարանքի այս ձեւը հնագույններից է եւ նախատիպ է հանդիսացել Սանահնի ճարտարապետական հուշարձանների ու Անիի Մայր տաճարի ճակատների նույնատիպ մշակման համար: Դեկորատիվ հարդարանքով համեմատաբար հարուստ է եկեղեցու ինտերիերը, ուր լուսամուտները պսակված են երեսակալներով, իսկ որմնասյուները՝ հոնիական քանդակազարդ խոյակներով: Ավագ խորանը հատակագծում ուղղանկյուն է, ինչը հազվադեպ է հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ, խորքում ունի ճոխ երեսակալով եզերված խորշ: Աղոթասրահը երկու զույգ հզոր որմնասյուներով բաժանված է երեք մասի: Որմնասյուների միջեւ ստացվում են խորշեր՝ ծածկված բարդ կտրվածքի կամարներով: Ուշ միջնադարում վերանորոգվել են Սուրբ Հովհաննես եկեղեցու թաղածածկը եւ զույգ ավանդատները, հյուսիսից եւ արեւմուտքից կրկնակի պատեր են կառուցվել: Հատակագծային հորինվածքով, հարդարանքի մեկնաբանությամբ յուրօրինակ այս տաճարը բազմաթիվ տարրերով առնչվում է Հայաստանի IV–VII դդ. ճարտարապետությանը:

Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցին գործող եկեղեցի է: Եկեղեցու ուխտի օր է հռչակվել սուրբ Հովհաննես Կարապետի եւ Հոբ Արդարի հիշատակության օրը: Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Բյուրական է բերվում սրբի մասունքն ամփոփող խաչաձեւ մասունքարանը, եւ ուխտի տոնական պատարագ է մատուցվում: Սրբի մասունքին հպվելու համար եկեղեցի են գալիս բազմաթիվ հավատացյալ հայորդիներ:

Բյուրականի Արտավազիկ եկեղեցի



Արտավազիկ եկեղեցին (Արտավասիկ, Արդավազիկ, Արդավասիկ, Արդավազդիկ, Արտավազիկ, Արտավազին Տիրամոր եկեղեցի) գտնվում է Բյուրականից մեկ կմ դեպի հյուսիս-արեւելք: Եկեղեցին VII դարի խաչաձեւ հատակագծով գմբեթավոր կառույց է (պատկանում է միախորան խաչաձեւ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիների տիպին): Արեւելյան խաչաթեւը կիսաշրջանաձեւ է, մյուսները՝ ուղղանկյուն: Հյուսիսարեւելյան անկյունում ունի ոչ մեծ ավանդատուն: Արեւմտյան խաչաթեւի տանիքին XIII դ. ավելացվել է սլացիկ համաչափություններով զանգակատունը: Մնացած թեւերի թաղածածկերը եւ գմբեթը փլված են: Առաջին անգամ վերանորոգվել է XII դ., երկրորդ անգամ՝ 1959–1960 թթ: Եկեղեցին կիսավեր, խոնարհված վիճակում էր: 2017 թ. իրականացվել են վերականգնողական աշխատանքներ: Եկեղեցու արեւելյան կողմում կանգուն է XIII դ. կոթող-խաչքարը:

* * *

Ըստ ավանդության՝ այստեղ երկար ժամանակ մի ճգնավոր է բնակվել: Երբ մի օր էլ սուրբ մենակյացը ավանդում է հոգին, նրա մահվան մասին ոչ ոք չի իմանում: Աստծո հրամանով հրեշտակը, ճգնավորի համար գերեզմանատեղ է պատրաստում, մոտենում է մի բարեպաշտ հնձվորի եւ ասում. *«Արդ, ահաւասիկ, ե՛րթ եւ ամփոփեա՛ զայն... »* (*«Հիմա (ուրեմն), ահա այստեղ է, գնա եւ ամփոփիր այն»*): *«Արդ, ահավասիկ»* բառերի միացմամբ էլ, իբր, եկեղեցին ստացել է իր Արդավասիկ անունը:

շարունակությունը՝ էջ 9

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ էջ 8

Մեկ ուրիշ ավանդության համաձայն՝ Արտավազդ անունով մի բարեպաշտ մարդ թողնում է աշխարհիկ կյանքը, դառնում ճգնավոր: Յոթ երկար տարիների ընթացքում Արտավազդն իր սեփական ձեռքերով կառուցում է փոքր, բայց ազդեցիկ ու ակնահաճո մի եկեղեցի: Նրա կառուցած եկեղեցին փոքր, բայց ազդու եւ զորավոր լինելու շնորհիվ էլ ստանում է Արտավազիկ անունը:



Հովհաննավանք



Աշտարակ քաղաքից 3 կմ հյուսիս-արեւելք՝ Օհանավան գյուղում, Քասաղի կիրճի աջափնյա բարձրադիր սարավանդի եզրին է գտնվում նշանավոր Հովհաննավանքը: Ավանդության համաձայն՝ Հովհաննավանքի հիմնադիրը Գրիգոր Ա. Լուսավորիչն է, որն այստեղ է բերել եւ ամփոփել սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքները: Ենթադրվում է, որ այդ իրադարձության շնորհիվ էլ ուխտավայրը ստացել է Հովհաննավանք անունը, եղել միջնադարյան Հայաստանի հոգեւոր-մշակութային եւ գիտակրթական կենտրոն:

Հովհաննավանքի հնագույն կառույցը Սուրբ Կարապետ միանավ եկեղեցին է (V դ.). այն իր վրա կրում է բազմաթիվ վերանորոգումների հետքեր:

Սուրբ Կարապետ Կաթողիկե եկեղեցին իր հորինվածքով ունի *«գմբեթավոր դահլիճի»* տիպի *«խաչագմբեթ»* ենթատիպ՝ արտաքուստ՝ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձեւ հատակագծով եւ անկյուններում՝ երկհարկ ավանդատներով:

Վանական համալիրի տարածքը հյուսիսային, արեւմտյան եւ հարավային կողմերից շրջափակված է կիսաշրջան բուրգեր ունեցող պաշտպանական պարսպով, որի մուտքը գտնվում է արեւմտյան հատվածի կենտրոնական մասում: Արեւելյան կողմից բնական անառիկ պատնեշ է ծառայել կիրճը:

Կառույցների ներսում, վանքի տարածքում եւ պատմական գերեզմանոցում պահպանվել են բազմաթիվ քանդակազարդ եւ արձանագիր հուշարձաններ՝ խաչքարեր, տապանաքարեր:

* * *

Հնավանդ մի ավանդազրույց է պահպանվել Հովհաննավանքի մասին: Թշնամական զորքն անակնկալ հարձակվում է գյուղի վրա, տարածում ավեր, մահ ու թալան: Թշնամական զորքով օղակված գյուղի բնակչությունը հավաքվել էր վանքի բակում: Հրոսակներից կյանք եւ ազատություն աղերսելու փոխարեն նրանք խնդրում են, որ իրենց թույլ տան մահից առաջ մի վերջին աղոթքով դիմել Ամենափրկիչ երկնային տիրոջը: Բռնակալը համաձայնում է: Մարդիկ հերթով մտնում են եկեղեցի եւ գաղտնուղով, որը սկիզբ էր առնում խորանի աջ կողմում գտնվող ավանդատնից, իջնում Քասաղ գետի ձորը: Վերջինը վանքից հեռանում է ծերունազարդ վանահայրը՝ իր ետեւից փակելով գաղտնուղու մուտքի սալաքարը: Հայտնվելով ձորում՝ նրանք փրկվում են անխուսափելի մահից:

Մուղնու Սուրբ Գեվորգ վանք

Մուղնի գյուղն ընկած է Երեւանից մոտ 20 կմ դեպի հյուսիս–արեւմուտք: Մուղնի գյուղի հարավային եզրին է գտնվում նշանավոր Մուղնու Սուրբ Գեւորգ վանքը: Պատմագիր Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու (XVII դ.) վկայությամբ՝ վանքը հիմնադրել են Հովհաննավանքի միաբանները եւ այնտեղ տեղափոխել Սուրբ Գեւորգ Զորավարի մասունքները: Դա, հավանաբար, տեղի է ունեցել XIII դ. առաջին կեսին:

XIII–XV դդ. Մուղնու Սուրբ Գեւորգ վանքում ձեռագրեր են գրվել ու ընդօրինակվել, վանքը դարձել է հռչակավոր ուխտատեղի: Վանքը ծաղկում է ապրել XVII դ., երբ համալիրը երկու անգամ հիմնովին վերակառուցվել է: Ժամանակին վանքում պահվող սրբություններից են եղել Սուրբ Գեւորգի աջը, Թադեոս առաքյալի եւ Մատթեոս ավետարանչի մասունքները:

Մուղնու Սուրբ Գեւորգ վանքի ուխտի օրը Խաչվերացի երկրորդ կիրակիին նախորդող՝ սեպտեմբերի վերջին շաբաթ օրն է, երբ Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի հիշատակը: Մուղնու Սուրբ Գեւորգ վանքը ուխտավորներով հատկապես աշխուժանում է նաեւ Սուրբ Հարության տոնին (Զատիկ) հաջորդող կիրակի օրը՝ Նոր կիրակիին կամ Կրկնազատիկին, երբ մաշտոցյան Մատենադարանում պահվող հրաշագործ *«Շուրիշկանի Ավետարանը»* մեծ հանդիսավորությամբ դուրս է բերվում եւ տարվում Մուղնի: Այս միջոցառումն առաջին անգամ իրականացվել է Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի (1941–2003 թթ.) միջնորդությամբ եւ Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Եղիշե քահանա Բարսեղյանի ջանքերով՝ 2002 թ. հունվարի 29–ին՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնին: Կրկնազատիկին *«Շուրիշկանի Ավետարանը»* մի քանի ժամով բերվում է Մուղնի եւ սուրբ պատարագի սկզբում եւ վերջում հենց այդ Ավետարանից հատվածներ են ընթերցվում: Պատարագից հետո ուխտավորները հնարավորություն են ունենում մերձենալ եւ համբուրել հրաշագործ Ավետարանը:

* * *

Ավանդության համաձայն՝ Հայոց կաթողիկոս սուրբ Ներսես Մեծը (Ներսես Ա. Պարթեւ, 353–373 թթ.) սուրբ Գեւորգի մասունքները Հայաստան է բերել եւ ամփոփել Հովհաննավանքում: Սուրբ Գեւորգի տոնին մեծ թվով ուխտավորներ էին գալիս Հովհաննավանք, եւ այդ տոնախմբությունների ժամանակ երեխաները անզգուշորեն երբեմն ձորն են ընկել: Ուստի Հովհաննավանքի միաբանները նպատակահարմար են գտել սուրբ Գեւորգի ուխտի օրը մասունքները տանել Կարբի: Այստեղ էլ բազմամբոխ ուխտավորների համար տեղն է փոքր եղել, եւ կարբեցիները ճանապարհի մոտ մի ազատ տեղ են գտել ու մասունքներն ամփոփելու համար մատուռ հիմնել: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ այդ մատուռը, Հովհաննավանքից մեկ մղոն հեռավորության վրա գտնվելով, կոչվել է Մուղնի. նախ՝ *«մղոն մի, ապա՝ Մղոնի եւ, ի վերջո, Մուղնի»:*

Ուշիի Սուրբ Սարգիս վանք

Ուշի (Աշտարակ քաղաքից 3 կմ հյուսիս) գյուղից մոտ մեկ կմ դեպի արեւմուտք՝ բարձունքի վրա գտնվում է Ուշիի Սուրբ Սարգիս վանքը: Վանական համալիրը կազմված է երկու եկեղեցուց, գավթից, օժանդակ շինություններից եւ պարսպապատերից: Հիմնադրվել է V դ., երբ Մեսրոպ Մաշտոցը Սուրբ Սարգսի մասունքները բերել է սկզբում Կարբի, ապա Ուշի եւ մասունքների ամփոփման տեղում կառուցել է վանք: Համալիրի կառույցներից հնագույնը Սուրբ Սարգիս միանավ թաղածածկ եկեղեցին է, որի պայտաձեւ ավագ խորանից մուտք կա դեպի հյուսիսից կցված ավանդատուն: Եկեղեցու ավագ խորանը ու առաստաղը ծածկված են եղել որմնանկարներով:

1872 թ. Ուշիի Սուրբ Սարգիս վանքը երկրաշարժից ավերվել է: 1999 թ. սկսվել են վանական համալիրի պեղումները, որոնց ընթացքում բացվել են Սուրբ Աստվածածին եկեղեցին, սրահի, օժանդակ շինությունների ավերակները, հայտնաբերվել են մշակութային արժեք ներկայացնող հնագիտական նյութեր, խաչքարեր, դրամներ եւ այլն:

շարունակությունը՝ էջ 10

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ էջ 9

Սաղմոսավանք

Սաղմոսավան (Աշտարակ քաղաքից մոտ 8 կմ հեռավորությամբ) գյուղի արեւելյան կողմում՝ Քասաղ գետի աջափնյա կիրճի եզրին, գտնվում է Սաղմոսավանքը: Ըստ ավանդության՝ այն հիմնել է Գրիգոր Լուսավորիչը:

Սաղմոսավանքը եղել է գրչության կենտրոն: Պահպանվել են այստեղ գրված եւ ընդօրինակված մի քանի ձեռագրեր:

Սաղմոսավանքի հյուսիսային կողմի գերեզմանատանը, ինչպես նաեւ, շինությունների ներսում, պահպանվել են XIII–XIV դդ. խաչքարեր, բազմաթիվ տապանաքարեր, դրանց մի մասը՝ հարուստ զարդաքանդակված խաչքարերի տեսքով: Առավել հետաքրքիր է պատվանդաններով խաչքարերի խումբը:

* * *

Ըստ ավանդության՝ Սաղմոսավանքը հիմնադրել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, երբ թողել է Ամենայն Հայոց Հայրապետական աթոռը: Նա ճգնել է Արագած լեռան լանջերին եւ ձմռան ցրտաշունչ եղանակին իջել Քասաղի կիրճը: Եվ այստեղ կառուցել է երկու անապատ, մեկը՝ կիրճում, որ անվանվել է Լուսավորչի անապատ, մյուսը կիրճի եզրին, եւ քանի որ վերջինում մշտապես սաղմոս էին երգում կամ կարդում, այն կոչվեց Սաղմոսաց անապատ:

* * *

Մեկ այլ ավանդության համաձայն՝ Արագած լեռան լանջերին ճգնող Գրիգոր Լուսավորիչը մի անգամ որոշում է իջնել Հովհաննավանք: Եվ ահա մեծաքանակ ուխտավորների եւ հոգեւորականների ուղեկցությամբ եւ անդադար սաղմոսներ երգելով հասնում են Քասաղի աջ ափին գտնվող մի գեղատեսիլ վայր եւ որոշում են հանգստանալ: Այդ տեղանքը շատ հավանելով՝ հետագայում եկեղեցի են կառուցում եւ անունը դնում Սաղմոսավանք:

Տեղերի Սուրբ Աստվածածին վանք

Արագածոտնի մարզում՝ Աշտարակ քաղաքից մոտ 15 կմ հյուսիս–արեւմուտք, Բյուրականից հյուսիս, Տեղեր գյուղում է գտնվում համանուն վանական համալիրը: Ըստ շինարարական արձանագրության՝ վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին եւ կից գավիթը 1212–1232 թթ. կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանի կինը՝ Մամախաթունը: Եկեղեցին ունի ներքուստ խաչաձեւ, չորս անկյուններում՝ երկհարկ ավանդատներով, արտաքուստ՝ ուղանկյուն, գմբեթավոր հորինվածք: Եկեղեցին առանձնանում է իր խիստ ձեւերով եւ դեկորատիվ հարդարանքի գրեթե իսպառ բացակայությամբ:

1948 թ. Տեղերի վանքի համալիրը երկրաշարժից զգալի վնասվել է: 1950–1952 թթ. նորոգվել են եկեղեցու եւ մատուռների գմբեթները, տանիքները ծածկվել տուֆե սալերով: 1975–1976 թթ. ամրացվել են քիվերը, նորոգվել եկեղեցու եւ գավթի պատերի վերին շարքերը:

* * *

Ավանդազրույցի համաձայն՝ Աստծո Միածին որդին՝ Հիսուս Քրիստոսը, իջել է Վաղարշապատ եւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչին լուսածիր կամարներով ցույց է տվել կառուցվելիք եկեղեցիների արտացոլանքները: Ու սուրբ Գրիգորը սկսել է Սուրբ Աթոռի շինարարությունը: Սակայն քանի որ ամառ էր, սաստիկ շոգ ու տոթաբեր օրեր, սուրբ Լուսավորիչը տեղափոխվում եւ բնակություն է հաստատում ավելի զովասուն ու մեղմաթով վայրերով հարուստ Արագածի լանջերին՝ Տեղեր գյուղում, ուր օրերն անց էր կացնում անդադար աղոթելով: Օրերից մի օր այնտեղ Լուսավորչին է հայտնվում ծիրանագույն հանդերձներով Աստվածածինը՝ լուսաճառագ հրեշտակների բազմությամբ շրջապատված, լույսերով ողողված եւ շուրջբոլորը լույս սփռելով: Երբ շինականները տեսան այդ հրաշափառ տեսարանը, ակամա շրջվեցին դեպի լուսաբաշխ սուրբ Աստվածածինը, որպեսզի երկրպագեն նրան: Հանկարծ տեսարանը վերացավ, լուսեղեն ամպը ծածկեց ծիրանազգեստ Աստվածամորն ու հրեշտակներին, նրանց բարձրացրեց երկինք: Մոտենալով շինականները սաստիկ զարմացան. չէ՞ որ քիչ առաջ նրանք տեսան Աստվածամորը, ի՞նչ եղավ, ինչո՞ւ չեն տեսնում: Ոմանք ասացին, թե ահա՛, այստեղ էր նա, մյուսներն էլ, թե ոչ, այդտեղ չէր, այստեղ էր: Այդպես էլ այն կոչվեց Տեղերի սուրբ Աստվածածին, որտեղ այժմ պահվում է մեռելահարույց եւ սքանչելագործ սուրբ Նշանը, որը նաեւ Լրջակապույտ սուրբ Նշան է կոչվում: Եթե որեւէ մեկը կատարյալ հավատով, աներկբա հույսով եւ ջերմեռանդ սիրով գնա եւ սրտաբուխ աղոթքով դիմի Տեղերի սուրբ Աստվածածնին, ապա կբժշկվի տարատեսակ ախտերից, կապաքինվի ցավերից եւ կազատվի այսահարությունից:

* * *

Տեղեր գյուղը հնում հռչակված է եղել իր շրջակայքում աճող դեղաբույսերով եւ անվանվել էր Դեղեր-Դղեր: Վանքի պատերի մոտ մինչ օրս կանգուն է հին դղրատան շինությունը, որտեղ ապաքինվում էին հայ փառապանծ մարտիկները:

Վանքի արձանագրությունից իմանում ենք, որ սրբավայրն օծվել է 1232 թվականին եւ գոյությամբ պարտական է իշխան Վաչե Վաչուտյանի կնոջը՝ Մամախաթունին: Դատելով մի քանի կցկտուր տեղեկություններից՝ վերջինս ազդեցիկ ու սիրված, ոգեղեն ու ջերմեռանդ տիկին էր, որ ամուսնուց ոչ պակաս ժրաջանությամբ ձեռնամուխ էր եղել ազատագրված Հյուսիս-արեւելյան Հայաստանի տարածքներում հոգեւոր–մշակութային կյանքի վերակերտման գործին: Մամախաթունը հատկապես մեծ ակնածանք էր տածում Խաչի եւ Խաչափայտի մասունքների նկատմամբ: Տեղերում իշխանական զույգի հիշատակին ամեն տարի պատարագ էր մատուցվում Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը, իսկ Վաչեի վերակառուցած Հովհաննավանքում, ուր տիկնոջ անունը կրկին հիշատակվում է ամուսնու կողքին, իշխանուհուն նվիրված հոգեհանգստի պատարագը տրվում էր Գյուտ խաչի տոնի օրը: Աղբյուրները հայտնում են, որ Տեղերի վանքում պահվող սրբազան իրերից էր հռչակավոր Լրջակապուտակ Սուրբ Նշանը կամ Սուրբ Լրջակը: Սա, դատելով անունից, կապույտ թանկարժեք քարից ոսկեզօծ կամ արծաթազօծ մեծ զարդախաչ պետք է լիներ, որում, հավանաբար, ամփոփված էր Խաչափայտի մասունք: Վանական համալիրը լի է խաչապատկերներով եւ Խաչին նվիրված արձանագրություններով, իսկ «Տեղերե անունը ուղղակի աղերս է Երուսաղեմի Սուրբ տեղերին՝ Տերունական վայրերին:

Այսօր վանքի եկեղեցու գավթի ձախ կողմի ենթասրահում երկու՝ իրար հպված տապանաքարեր կան, որոնց վրա ասեղնագործ սպիտակ շղարշ է գցված եւ ծաղիկներ ու մոմեր են դրված: Այցելուներին հայտնում են, որ դրանք Մամախաթունի եւ Վաչեի տապանաքարերն են: Սակայն միանգամայն ստույգ աղբյուրներից հայտնի է, որ Մամախաթունի տապանը գտնվում է գավթի կենտրոնական սրահում, եկեղեցու մուտքին կից անմիջապես երկրորդն է, իսկ Վաչե Վաչուտյանի աճյունը զետեղված է Հովհաննավանքի՝ իր կառուցած եկեղեցու ներսում (մի բան, որ գրեթե չի պատահում հայկական ավանդույթում):

* * *

Տեղերի վանքի եւ Երուսաղեմի հետ կապված մեկ այլ գողտրիկ պատմություն կա: Տասներեքերորդ դարի պատմիչ եւ մեծ մտավորական Վարդան Արեւելցին, որ հավանաբար ինչ-որ ժամանակ բնակվել է Տեղերի վանքում, Երուսաղեմում իր ապրած օրերի մասին պատմելիս գրում է, թե Տեղերի վանքում իրեն հասակակից մի աբեղա կար՝ Սարկավագ անունով, որ աղոթքի շնորհ ուներ: Այսպես, Աստծո մի կիրակի, երբ նա ավագ երեց էր նշանակված, պատարագից առաջ գնում է վանքին առընթեր մայրի ծառի տակ աղոթելու եւ միտքն Աստծով՝ ընկնում է հափշտակության մեջ: Այդպես մնում է յոթ օր: Վանքում մտածում են, թե ինչ-որ տեղ է գնացել ու նեղսրտում են, թե ինչու չի հայտնել: Հաջորդ կիրակի, բանից անտեղյակ՝ Սարկավագը վերադառնում է վանք՝ կարծելով, թե քիչ առաջ էր դուրս եկել եւ, սովորականի պես, նշխարփարչն առած՝ ցանկանում է ջուր բերել, որ ժամասացությունը կատարի: Երբ վանքի բնակիչները սկսում են մեղադրել, թե ախր որտեղի՞ց ես գալիս եւ ո՞ւր էիր այս ութ օրերին, նոր միայն իմանում է պատահածը, փարչը վայր է դնում ու ոչինչ չասելով՝ գնում իր խուցը: Հետո գաղտնի լքում է վանքը եւ ուղեւորվում Երուսաղեմ: Ճանապարհին մի ուղեկից է պատահում, եւ երկուսով գնում են նախ Գեթսեմանի պարտեզի սրբավայրը: Այստեղ Սարկավագը ողջ գիշերն աղոթքի է մնում, մինչդեռ ընկեր-ուղեկիցը, որ մի անկյունում կանգնած էր, տեսնում է, թե ինչպես է նրան հայտնվում Աստվածամայրը եւ ոսկի ամանով ընպելիք մատուցում: Այնուհետեւ նրանք գնում են Սինա լեռը, ուր նա տեսնում է Մովսեսին եւ Եղիային: Ապա սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, ժողովրդին արձակելուց հետո, փակում է եկեղեցու դուռը եւ կարծելով, թե ներսում մարդ չմնաց՝ սկսում է աղոթել:

Գալիս է սուրբ Ստեփանոսը, համբուրում նրան եւ տալիս է հրեղեն ընպելիք: Աբեղան ասում է, թե՝ *«յուշ էր եկիր յայս տարպայս»*, որ նշանակում է՝ ուշ եկար այս անգամ: Նախավկան պատասխանում է, թե՝ գիտե՛ս, հայր, թե այսօր քանի եկեղեցի եմ գնացել՝ տոնակատարներին Աստծո շնորհով մեծարելու համար եւ օրը պարպեցի: Մի աբեղա, որ թաքնված էր մնացել բեմի ետեւում, ամեն ինչ լսում ու տեսնում է, ապա գալիս ու ընկնում է Սարկավագ աբեղայի ոտքերը, իսկ վերջինս նրան պատվիրում է ոչ մեկին չասել: Սարկավագն այսպես որոշ ժամանակ մնալով Սուրբ քաղաքում՝ վախճանվում է եւ երկնային լույսով վկայում է Աստծուն, այսինքն՝ մահանում է մարտիրոսին վայել մահով, իսկ մահվան պահին բժշկություններ են տեղի ունենում: Նրա ուղեկից ընկերը հետ է վերադառնում Տեղերի վանք եւ ստուգապես ամեն ինչ պատմում:

(շարունակելի)

Արման ՄԱԼՈՅԱՆ,
պատմական գիտությունների թեկնածու

9-րդ դասարան

Օտար լեզու՝ անգլերեն. ավարտական քննության ուղեցույց*

Հիմնական դպրոցի *«Անգլերեն»* առարկայից ավարտական քննության հարցատոմսի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի *«Անգլերեն»* առարկայից քննական հարցատոմսերի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի *«Անգլերեն»* առարկայի առարկայական ծրագրերին և չափորոշիչներին:

Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք:

Առաջին առաջադրանքում տրվում է տեքստ (մինչև **200** բառ) և դրա վերաբերյալ **4 հարց:** Աշակերտը պետք է բարձրաձայն կարդա տեքստը և կարողանա պատասխանել տեսքտի բովանդակությանը վերաբերող 4 հարցերին: Առաջադրանքը գնահատվում է **5 միավոր:**

1 միավոր տրվում է սահուն կարդալու, ճիշտ արտասանության համար (նաև մինչև 4 արտասանական սխալի դեպքում) և **1-ական միավոր**՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանած հարցի համար:

Երկրորդ առաջադրանքում տրված են նախադասություններ, որոնցից դուրս բերված **5 բայերը** պետք է դնել պահանջվող ժամանակաձևով: Առաջադրանքը կատարվում է գրավոր և գնահատվում է **5 միավոր:**

Երրորդ առաջադրանքը թարգմանություն է հայերենից անգլերեն, որը կատարվում է գրավոր: Տրվում է **5** նախադասություն (մինչև **40** բառ):

Թարգմանությանը տրվում է **5 միավոր** և գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- 5 միավոր *տրվում է անթերի աշխատանքի համար:*

- 4 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 1-2 սխալ (ուղղագրական, բառագործածական կամ քերականական):*

- 3 միավոր տրվում *է այն դեպքում, եթե նախադասությունները հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 3–4 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ*

- 2 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները գրեթե ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 5-6 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ*

- 1 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 7–8 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ*

- միավոր չի տրվում, *եթե թույլ է տրված 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:*

Չորրորդ առաջադրանքը երկխոսություն է որևէ թեմայի շուրջ: Երկխոսության մեջ բացակայում է կամ հարցը, կամ պատասխանը: Յուրաքանչյուր **ընդարձակ, ճիշտ ձևակերպված** պատասխանի համար տրվում է **1 միավոր:**

Չորրորդ առաջադրանքն ամբողջությամբ գնահատվում է **5 միավոր:** Գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով:

1 միավոր տրվում է, եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է քերականորեն և շարահյուսորեն ճիշտ՝առանց էական սխալների:

միավոր չի տրվում, եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է էական սխալներով:

SAMPLE

Examination Card

I. Read the text and answer the questions following it.

Line number

1 There is no one who hasn't heard of Walt Disney; he is one of the most famous
2 figures in the twentieth century and yet most people hardly know anything about
3 him. Although he became one of the most successful men in history, he left school
4 at the age of sixteen and then studied art for a short time. By the early years of this
5 century, he had already started to produce cartoons in Hollywood in partnership with
6 his brother Roy, who, for some reason, never managed to become as famous as
7 Walt. Disney is perhaps most well known on account of his lovable cartoon
8 character, Mickey Mouse, who first appeared in 1928 in a film called Steamboat
9 Willie. One of the most popular cartoon films of all time is Snow White and the
10 Seven Dwarfs which was the first full-length cartoon in the history of the cinema.
11 By the 1950s, Walt Disney had become one of the world's major producers of
12 films for cinema and television. He also published books for children.

1. What do you know about Walt Disney?
_____

2. When did he start to produce cartoons?
_____

3. The word **famous** is synonymous to
_____

4. Did he produce films?
_____

II. Write the verbs in the right tense form.

Mark Twain (**1**)_____to go to the opera by his friend. (**to be invited**) He was very rich. During the performance, the friend's wife talked all the time. She talked so much that it (**2**)_____ very difficult for Mark Twainto listen to the opera. (**to be**) At the end of the performance she (**3**)_____ to Mark Twain and said: (**to turn**) "Oh, my dear Mark Twain, I want you to be with us again next Friday night. The opera will be "Carmen". I'm sure you (**4**)_____ it." (**to like**). "Thank you very much," said Mark Twain, "that will be fine. I (**5**)_____ never_____you in"Carmen". (**to hear**)

III. Translate the sentences from Armenian into English.

1. Դու կարող ես կատարելագործել քո անգլերենը՝ նոր բառեր սովորելով:
_____

2. Բոբը դուրս եկավ փողոց՝ առանց անձրևանոց վերցնելու:
_____

3. Երբ իմ հյուրերը ներս մտան, Մերին ինձ մենակ թողեց նրանց հետ:
_____

4. Երեխաներին չի թույլատրվում զբոսանքի գնալ՝ առանց ծնողների:
_____

5. Տեղեկացրե՛ք նրանց, որ մենք չենք կարող ավարտել այս աշխատանքը ժամանակին:
_____
_____

IV. Write questions and/or answers to the given dialogue.

Tom: Hi Jack. _____?
Jack: Hi Tom. I'm fine.
Tom: _____?
Jack: I come here from London.
Tom: _____?
Jack: I have lived there for five years.
Tom: _____?
Jack: Yes, I like here very much.
Tom: How long are you going to stay here?
Jack: I think _____.

* *«Կրթություն» շաբաթաթերթի նախորդ համարում թյուրիմացաբար՝ տեխնիկական (համակարգչային ծրագրի խափանման) պատճառներով, ներկայացվել են «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննության անցած տարվա ուղեցույցները: Սույնով ներկայացնում ենք խնդրո առարկա ուղեցույցների ճշտված՝ 2023-2024 թթ. ուսումնական տարվա համար նախատեսված տարբերակները:*

Հայտարարություն

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2024 թվականի մայիսի 15-ից 2024 թվականի հունիսի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից***՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 13:00-ին,** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (033) 27-32-32, (093) 15-93-81 հեռախոսահամարներով: էլեկտրոնային հասցեն՝ statecollege@list.ru:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի Լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտի պատճենը.

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) Տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանաջներին համապատասխան.

5) Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտողարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2024 թվականի մայիսի 15-ից մինչեւ 2024 թվականի հունիսի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից***՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երեւան, Հրաչյա Ներսիսյան 3:

Մրցույթը տեղի կունենա ***2024 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 12:00-ին***՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 23-36-05, (091) 57-78-07 հեռախոսահամարներով: Փաստաթղթերը ուղարկել tiv10usumnaran@mail.ru էլեկտրոնային հասցեին:

9-րդ դասարան

Օտար լեզու՝ ֆրանսերեն. ավարտական քննության ուղեցույց

Հիմնական դպրոցի *«Ֆրանսերեն»* առարկայից ավարտական քննության հարցատոմսի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի *«Ֆրանսերեն»* առարկայից քննական հարցատոմսերի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի *«Ֆրանսերեն»* առարկայի առարկայական ծրագրերին և չափորոշիչներին:

Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք:

Առաջին առաջադրանքում տրվում է տեքստ (մինչև **200** բառ) և դրա բովանդակության վերաբերյալ **4 հարց:** Աշակերտը պետք է բարձրաձայն կարդա տեքստը և կարողանա պատասխանել տեքստին վերաբերող 4 հարցերին: Առաջադրանքը գնահատվում է **5 միավոր: 1 միավոր** տրվում է սահուն կարդալու, ճիշտ արտասանության համար (նաև մինչև 4 արտասանական սխալի դեպքում) և **1-ական** միավոր՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանած հարցի համար:

Երկրորդ առաջադրանքում տրված են նախադասություններ, որոնցից դուրս բերված 5 բայերը պետք է դնել պահանջվող ժամանակաձևով: Առաջադրանքը կատարվում է գրավոր և գնահատվում է **5 միավոր:**

Երրորդ առաջադրանքը թարգմանություն է հայերենից ֆրանսերեն, որը կատարվում է գրավոր: Տրվում է **5** նախադասություն (մինչև **40** բառ): Թարգմանությանը տրվում է **5 միավոր** և գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- 5 միավոր *տրվում է անթերի աշխատանքի համար:*

- 4 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 1-2 սխալ (ուղղագրական, բառագործածական կամ քերականական):*

- 3 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 3–4 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ:*

- 2 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները գրեթե ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 5-6 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ:*

- 1 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասություններում թույլ է տրված 7–8 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ:*

- Միավոր չի տրվում, *եթե թույլ է տրված 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:*

Չորրորդ առաջադրանքը երկխոսություն է որևէ թեմայի շուրջ: Երկխոսության մեջ բացակայում է կամ հարցը, կամ պատասխանը: Յուրաքանչյուր **ընդարձակ, ճիշտ ձևակերպված** պատասխանի համար տրվում է **1 միավոր:** Չորրորդ առաջադրանքն ամբողջությամբ գնահատվում է **5 միավոր:** Գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով՝ **1 միավոր** տրվում է, եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է քերականորեն և շարահյուսորեն ճիշտ՝առանց էական սխալների, **միավոր չի տրվում,** եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է էական սխալներով:

Թեստի նմուշ

I. Lire le texte et répondre aux questions.

Une jolie légende raconte l'origine du mot nougat. C'est l'histoire de Tante Manon qui confectionne une friandise délicieuse pour ses nièces. Quand elles arrivent chez leur tante et qu'elles savourent cette sucrerie, elles disent: "Tante Manon, tu nous gâtes" [nugat]. En fait, la recette du nougat date au moins depuis l'Antiquité (600 ans avant Jésus-Christ). On trouve le nougat dans tout le bassin méditerranéen et en Provence. Les Grecs ont introduit cette spécialité. En latin nougat signifie nuxgatum ou gâteau aux noix. A la fin du seizième siècle, Olivier de Serres plante un amandier. C'est un arbre qui s'adapte très bien aux terres arides de la Provence. L'amande se substitue alors à la noix et le nougat prend une couleur blanche. En 1701 les Ducs de Bourgogne et de Berry sont de passage à Montélimar. Le Premier Consul de la ville offre à chacun une boîte de nougat blanc. Depuis, le nougat est considéré comme un présent réservé aux personnes de marque qui s'arrêtent dans la ville. Il existe plusieurs types de nougat. Cela dépend des ingrédients et de la cuisson. Il y a le nougat noir, le nougat blanc avec des amandes ou du nougat de couleurs. Les ingrédients du nougat blanc sont : le miel, le sucre, les amandes et le pain.

1 D'après la légende pour qui Manon confectionne-elle des friandises ?
2 En quelle période le nougat est-il apparu ?
3 Que fait Olivier de Serres?
4 Qu'est-ce qui était mis à la place de noix pour la fabrication des nougats?

II. Mettre les verbes entre parenthèse au temps donné.

1 Il _____ /rompre (présent)/ la branche en l'appuyant sur son genou.
2 J' _____/apercevoir (passé composé)/ l'avion à réaction.
3 I est douteux qu'il _____ / venir (subjonctif)/.
4 Elle _____/se douter bien (imparfait)/ que je n'irais pas.
5 Les ouvriers _____ /blanchir (futur immédiat)/la façade à la chaux.

III. Traduire les phrases de l'arménien en français.

1 Հորդառատ անձրևը չխանգարեց դպրոցի բակում խաղացող երեխաներին:
---
2 Ցավոք, ես ժամանակ չունեցա ծանոթանալու ձեր նախագծին:
---
3 Մեր թաղամասում մի նոր դպրոց կառուցեցին:
---
4 Կարծում եք նրանք կկարողանա՞ն համագործակցել մեզ հետ:
---
5 Պետք է ասեմ, որ նրա լուրջ տեսքն ինձ իսկապես անհանգստացրեց:

IV. Compléter le dialogue avec les phrases manquantes.

1. le vendeur: -Bonjour madame. Est-ce que je peux vous aider ?
la cliente: - _____.
2. le vendeur: -_____?
la cliente: - C'est pour une soirée.
3. le vendeur: - Vous voulez une robe de quelle couleur?
la cliente: -_____.
4. le vendeur: - Ce modèle vous plait?
la cliente: - _____?
5. le vendeur: -Vous payez par carte, par chèque ou en espèces?
la cliente: -_____.
6. le vendeur: - Merci madame. Bonne journée madame.
la cliente: - Merci. Au revoir.

Օտար լեզու՝ գերմաներեն. ավարտական քննության ուղեցույց

Հիմնական դպրոցի *«Գերմաներեն»* առարկայից ավարտական քննության հարցատոմսի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի *«Գերմաներեն»* առարկայից քննական հարցատոմսերի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի *«Գերմաներեն»* առարկայի առարկայական ծրագրերին և չափորոշիչներին:

Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք:

Առաջին առաջադրանքում տրվում է տեքստ (մինչև **200** բառ) և դրա բովանդակության վերաբերյալ **4 հարց:** Աշակերտը պետք է բարձրաձայն կարդա տեքստը և կարողանա պատասխանել տեսքտին վերաբերող 4 հարցերին: Առաջադրանքը գնահատվում է **5 միավոր: 1 միավոր** տրվում է սահուն կարդալու, ճիշտ արտասանության համար (նաև մինչև 4 արտասանական սխալի դեպքում) և **1-ական միավոր՝** յուրաքանչյուր ճիշտ պատասխանած հարցի համար:

Երկրորդ առաջադրանքում տրված են նախադասություններ, որոնցից դուրս բերված **5 բայերը** պետք է դնել պահանջվող ժամանակաձևով: Առաջադրանքը կատարվում է գրավոր և գնահատվում է **5 միավոր:**

Երրորդ առաջադրանքը թարգմանություն է հայերենից գերմաներեն, որը կատարվում է գրավոր: Տրվում է **5** նախադասություն (մինչև **40** բառ): Թարգմանությանը տրվում է 5 միավոր և գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- 5 միավոր *տրվում է անթերի աշխատանքի համար:*

- 4 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 1-2 սխալ (ուղղագրական, բառագործածական կամ քերականական):*

- 3 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 3–4 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ*

- 2 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները գրեթե ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 5-6 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ*

- 1 միավոր *տրվում է այն դեպքում, եթե նախադասություններում թույլ է տրված 7–8 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ* ***միավոր չի տրվում,*** *եթե թույլ է տրված 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:*

Չորրորդ առաջադրանքը երկխոսություն է որևէ թեմայի շուրջ: Երկխոսության մեջ բացակայում է կամ հարցը, կամ պատասխանը: Յուրաքանչյուր **ընդարձակ, ճիշտ ձևակերպված** պատասխանի համար տրվում է **1 միավոր:** Չորրորդ առաջադրանքն ամբողջությամբ գնահատվում է **5 միավոր:** Գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով՝ **1 միավոր** տրվում է, եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է քերականորեն և շարահյուսորեն ճիշտ՝առանց էական սխալների, **միավոր չի տրվում,** եթե հարցը կամ պատասխանը ձևակերպված է էական սխալներով:

Թեստի նմուշ

I. Lest den Text und beantwortet die Fragen.

Der Schafhirte und der Wolf

Der Schafhirte Peter musste jeden Tag zur Weide gehen, um die Schafe seines Vaters zu beaufsichtigen. Manchmal war ihm **langweilig** und so hatte er eines Tages eine dumme Idee. Laut schrie der Junge: „Der Wolf! Der Wolf!" Die Nachbarn eilten sofort herbei. Sie waren mit Rechen und Stöcken bewaffnet. Alle wollten dem Schafhirten zur Hilfe kommen, doch weit und breit war kein Wolf zu sehen.

Da lachte der Bub die hilfsbereiten Leute aus. Peter gefiel es, seine Nachbarn zu ärgern. Immer wieder spielte er ihnen den gleichen Streich und sie kamen jedes Mal herbeigelaufen, um das Schlimmste zu verhindern und ihm zu helfen.

Einige Zeit später fiel nun aber wirklich der Wolf in die Herde ein. „Der Wolf! Der Wolf!", schrie der Schafhirte aus Leibeskräften. „Es ist der Wolf!" Doch diesmal rührte sich nichts. Obwohl alle Leute das Rufen hörten, kam kein einziger, um dem Jungen zu helfen. „Falscher Alarm!", sagte einer der Nachbarn. „Wie schon so oft! Der Junge hält uns nur zum Narren!" Der Wolf konnte nun ungestört viele Schafe reißen und der Hirtenjunge musste hilflos zusehen. Die Lehre aus dieser Geschichte: Wer einmal lügt, dem glaubt man nicht, auch wenn er dann die Wahrheit spricht.

1. Was machte der Schafhirte Peter auf der Weide?
2. Was für eine dumme Idee hatte er aus Langweile?
3. Wie wurde er bestraft?
4. Findet das Gegenteil (Antonym) von langweilig!

II. Schreibt die Verben in richtiger Zeitform.

1. Ich _____ für Deutsch. (sich interessieren - Präsens)
2. Wir _____ im Unterricht die neuen Wörter. (üben - Präteritum)
3. Kinder, _____ die Wortfolge im Nebensatz! (beachten - Imperativ)
4. Wir _____ gestern über den Naturschutz _____ (sprechen - Perfekt)
5. Nächste Woche _____ wir einen Ausflug _____ (machen - Futurum)

III. Übersetzt die Sätze ins Deutsche.

1. Ես շատ ընկերներ ունեմ տարբեր երկրներում:
_____
2. Հյուրերը շնորհակալ էին ջերմ ընդունելության համար:
_____
3. Նրա օգնության շնորհիվ ես հանձնեցի քննությունս:
_____
4. Աղջիկները, որոնք նստած են զբոսայգում, իմ ընկերուհիներն են:
_____
5. Մենք կցանկանայինք իմանալ, արդյոք մենք կարող ենք այդ աշխատանքներին մասնակցել: _____

IV. Schreibt Fragen und/oder Antworten zum angegebenen Gespräch.

1. A: -Wohin bist du gefahren?
B:-_____.
2. : A: _____?
B: -Letzte Woche.
3. A:-Mit wem bist du gefahren?
B: -_____.
4. A: -_____?
B: - Zwei Wochen.
5. A: -_____?
B: -Ja, ich habe viel Spaß gehabt.

Փորձի՛ր լրացնել

Մի բուռ գիտելիք



Ուղղահայաց

1. Վրթանես Մեսրոպի … (1864, Վան-1920, Երեւան)՝ հայ գրող, հասարակական-քաղաքական գործիչ, գրաքննադատ, ազգագրագետ, մանկավարժ: Եղել է ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, տիրապետել է 14 լեզվի: Հայերեն է թարգմանել մի շարք գրողների ստեղծագործություններ: **2.** Գույնզգույն, գունագեղ, երփներանգ: **3.** Նա հրեշի պես կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ սեղմել ճակատիս, Եվ ամեն քայլիս շղթա է զարկել, … է դրել լեզվիս ու մտքիս (Ա.Իսահակյան): **4.** Հին հունական մարտակարգ, ծանրազեն հետեւակի գծային հոծ զորաշարք: **5.** … Չարլզ Հրաչ (1918, Թրոյ (Նյու Յորք,)-2007), հայազգի ամերիկյան ռադիոֆիզիկոս, ԱՄՆ-ի ազգային ԳԱ անդամ (1956): Օգտվելով Վ.Համբարձումյանի ինվարիանտության սկզբունքից, լուծել է անհամասեռ միջավայրում ռադիոալիքների տարածման մի շարք խնդիրներ: **6.** Յուրի Գեւորգի … (ծն. 1925, Թիֆլիս), հայ նշանավոր իրավաբան-միջազգայնագետ: 1968-72-ին ՍՍՀՄ ԳԱ համաշխարհային տնտեսության եւ միջազգային քաղաքականության ինստիտուտի բաժնի վարիչ: **9.** Է՜յ, լավ կենաք, ակա՛նջ արեք, Մի բան պատմեմ հիմի ձեզ, Խոսքըս, տեսե՛ք, ու՞ր է գնում … որսկանի գյուլլի պես (Հ.Թումանյան): **10.** Է՜յ, …ի երկիր, թաջիրի երկիր, Գյուլնարի պես վարդ Շիրազում չկար, Գյուլնարի պես վարդ հարեմի՛ երկիր, Իրանի ոչ մի հարեմում չկար (Գ.Սարյան): **12.** … Երվանդյան՝ հայոց թագավոր մ.թ.ա. 560-535-ին: Հաջորդել է հորը՝ Երվանդ Ա. Սակավակյացին: **13.** Տաղանդ, շնորհք, ձիրք, հանճար: **15.** Սիրո եւ գեղեցկության աստվածուհին հայոց դիցարանում: **18.** Հայ նշանավոր բանաստեղծուհի, ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ (1967): *«Սրտերի լիրիկան»* բանաստեղծությունների ժողովածուի հեղինակ: **22.** Խոսքի մաս, որին պատկանող բառերն արտահայտում են առարկայնություն: **23.** Վարդագգիների ընտանիքի բույսերի ցեղ: **25.** … տրամաբանություն, տրամաբանության բաժին, որն ուսումնասիրում է *«անհրաժեշտություն»* եւ *«հնարավորություն»* տրամաբանական կատեգորիաները: **26.** Սփյուռքահայ գրող Տիգրան Չրաքյանի գրական անունը: **27.** Ջրվեժ Չորուն գետի վերին հոսանքում, Գվիանական բարձրավանդակում (Վենեսուելա): **28.** Հենրիկ … (1828-1906), Նորվեգացի դրամատուրգ եւ բանաստեղծ: Ռեալիստական դրամայի հիմնադիրը: **29.** Անհամար, անքանակ, բազմաթիվ, բյուր: **33.** Ա՜խ, իմ սեըս՝ կանաչ- …, Դառավ ինձի ցավ ու ցեց. Ա՜խ, իմ կյանքս զառ-վառ … , Վիշտս կերավ ու մաշեց (Ավ.Իսահակյան): **35.** Կարլ Ավգուստ … (1865-1931), դանիացի կոմպոզիտոր, դիրիժոր: *«Սավուղ եւ Դավիդ»*, *«Դիմակահանդես»* օպերաների հեղինակ: **38.** Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում, Վոլգայի ափին: **39.** *«Այդ զինավառության մեջ Ռշտունյաց օրիորդը նմանվում էր … -Պալասին»*, Ռաֆֆի, *«Սամվել»*: **41.** Կոլին …(1698-1746), շոտլանդացի մաթեմատիկոս, Նյուտոնի աշակերտ, Լոնդոնի թագավորական ընկերության անդամ: **42.** Մետաքսիա Միհրանի … (ծն.1926), հայ տաղանդավոր դերասանուհի, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի (1981): Արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի: **46.** … Կյուրիկե, Լոռու թագավորը (970-991): **47.** Խոշոր ֆեոդալ, մեծատոհմիկ եւ հարուստ ազնվական Եվրոպայի որոշ երկրներում: **49.** Աննշմար, աննկատ, անեռեւելի: **50.** ներբող: **51.** Գեղեցկության ծով ես, հոգիս, մարջանով է շուրթդ շիկնել, Ատամներդ՝ ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ, Հոնքդ … է, իսկ ճակատիդ այդ լուսեղեն խորշոմն՝ ալիք, Պարանոցդ՝ ջրապտույտ, եւ աչքերդ՝ փոթորիկներ (Ռուդաքի): **52.** Երկարության արտահամակարգային միավոր(հնացած):

Հորիզոնական

7. Ալեքսանդր Անդրանիկի …(ծն.1928)՝ հայ նշանավոր մաթեմատիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1965): Նա մեծ ավանդ ունի Հայաստանում իրական փոփոխականի ֆունկցիաների մետրիկական տեսության զարգացման գործում: **8.** Հովհաննես Համբարձումի … (ծն.1924), հայ նշանավոր երգիչ, ՀՍՍՀ վաստակավոր արտիստ: Նրա երգացանկը ընդգրկել է հայկական ժողովրդական, գուսանական եւ էստրադային երգեր: **11.** Ազգային, քաղաքական, գրական օրաթերթ: Լույս է տեսնում Բեյրութում 1937-ից: Օրգան հնչակյան կուսակցության: Խմբագիրներ՝ Ա.Կիտուր, Ա.Էլոյան, Ն.Ղարիբյան եւ ուրիշներ: **13.** Կրոնի սպասավոր քրիստոնեական եկեղեցում: **14.** Կարապետ Հարությունի …(1835, Մոսկվա-1905, Պետերբուրգ), հայ բանասեր, պատմաբան: *«Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ»* աշխատության հեղինակ: **16.** Ա՜խ, վաթան ջան, մնալով, Պանդուխտ հողում մնալով, … կյանքս մաշեցի. Քեզնից հեռու՜ մնալով (Ավ.Իսահակյան): **17.** … Ա Մանազկերտցի (ծն. թ. անհայտ-381), հայոց կաթողիկոս, հասարակական գործիչ: **19.** Գեորգ …(1845, Պետերբուրգ-1915, Հալե), գերմանացի մաթեմատիկոս: Մուծել է սահմանային կետի, ածանցյալ բազմության հասկացությունները, ձեւակերպելէ անընդհատության աքսիոմներից մեկը: **20.** Գյուղ ՀՍՍՀ էջմիածնի շրջանում: Այդ գյուղով է անցնում Երեւան-էջմիածին ճանապարհը: **21.** Հին հույն իդեալիստ փիլիսոփա (մ.թ.ա. 427-348): *«Աշխատելով ուրիշների երջանկության համար, մենք գտնում ենք մեր սեփականը»* աֆորիզմի հեղինակ: **24.** Կղզի Վանա լճի հյուսիս-արեւելքում: **26.** Լիճ Ֆինլանդիայի հյուսիսում: **29.** Տափաստաններից, խուժանը վայրագ Հորդել է, եկել-հեղեղ զայրագին, Ուզում է, …, ընկճել լուծի տակ Քո ստեղծագործ, թեւավոր ոգին (Ավ.Իսահակյան): **30.** …(մոտ.380-մոտ. 450), հայ պատմիչ, վարդապետ, թարգմանչաց շարժման գործիչ: Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից: **31.** Գիշատիչ կաթնասուն կենդանի, արտաքինից որոշ չափով նման է շանը: **32.** Նահանգ ԱՄՆ-ում, հարավից ողողվում է Մեքսիկական ծոցի ջրերով: **33.** Կամաց, հանդարտ, դանդաղ, հուշիկ: **34.** Սերգեյ Ալեքսանդրովիչ …(1895-1925), ռուս բանաստեղծ: 1916-ին լույս է տեսնում նրա *«Ռադունիցա»* բանաստեղծությունների ժողովածուն, որը աչքի է ընկնում կյանքի ընկալման թարմությամբ, զգացմունքների անաղարտությամբ: Ինքնասպան է եղել ծանր հոգեվիճակում: **36.** Շախմատի աշխարհի չեմպիոն: **37.** *«… աղա»* հայ ժողովրդական վիպերգ: **40.** Վիլհելմ …(1864-1928), գերմանացի նշանավոր ֆիզիկոս, նոբելյան մրցանակակիր (1911): Նրա անունով են կոչվում ֆիզիկական մի քանի օրենքներ: **43.** Երբ տուն դարձան հանգրվանից, մարդիկ նրա բարձի տակ Գտան մի թուղթ՝ վրան այսպես ձեռագրված մի կտակ: *«Երգ սիրեցեք կյանքի բոլոր վայելքներից ավելի, երգն է բուժիչ բալասանը անդնդախոր ցավերի, երգ սիրեցե՛ք, առանց երգի վիշտն աշխարհը կավերի»* (հեղինակ): **44.** Լուիշ Դի … (1524-1580), պորտուգալացի բանաստեղծ: Նրան համաշխարհային հռչակ է բերել *«Լուզական»* էպիկական պոեմը, որն այդպես է կոչվել ի պատիվ դիցաբանական Լուզիի, որից, առասպելի համաձայն, սերում են պորտուգալացիները: **45.** Հայ ականավոր դերասանուհի, ՀՍՍՀ վաստակավոր արտիստուհի Թագուհի Ստեփանոսի Հակոբյանի բեմական անունը: Նա կարեւոր դեր է կատարել նաեւ հայ կինո-արվեստի սկզբնավորման ու զարգացման գործում: **48.** Ծաղիկների, պատանեկության եւ գարնանային զարթոնքի աստվածուհին հին հռոմեական դիցաբանությունում: **50.** Կենդանական կամ բուսական օրգանիզմի մաս, որը կատարում է իրեն բնորոշ մեկ կամ մի քանի ֆունկցիաներ: **52.** Ե՛վ սեր ու երգեր, ե՛ւ փառք ու հանճար Սին պատրանքներ են մահը մոռնալու, Եվ մարդը՝ դժբախտ, … ու անճար Ծնված է մահին պատառ դառնալու (Ավ.Իսահակյան): **53.** Յան … (1834-1891)՝ չեխ գրող: Իրավունք եւ փիլիսոփայություն է ուսումնասիրել Պրագայի համալսարանում: Եղել է գրական մի շարք հանդեսների խմբագիր: *«Բոսյակներ»* վիպակի, ինչպես եւ *«Արաբենիք»*, *«Տարբեր մարդիկ»* պատմվածքների ժողովածուների հեղինակ: **54.** Նոբելյան մրցանակի կրկնակի դափնեկիր: **55.** Դմիտրի Իվանովիչ …(1834-1907), ռուս հայտնի քիմիկոս, տարրերի պարբերական համակարգի հայտնագործողը: **56.** Անահիտ Արամի … (ծն.1917), հայ նշանավոր կին արձակագիր: *«Խաչուղիներ»*, *«Կարոտ»* ,*«Կեռմաներ»* վեպերի հեղինակ: Նրա *«Ծարավ»* պատմվածքների ժողովածուն արժանացել է ՀՍՍՀ պետական մրցանակի (1955):

Կազմեց Ժորա ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

Հայտարարություն

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը (ՀՌՀ) հայտարարում է մրցույթ՝ հետեւյալ ամբիոնների վարիչների պաշտոնների տեղակալման համար՝

- Համաշխարհային քաղաքականության եւ միջազգային հարաբերությունների ամբիոն,

- Կ.Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոն,

- Քրեական իրավունքի եւ քրեական դատավարության իրավունքի ամբիոն,

- Տնտեսագիտության եւ ֆինանսների ամբիոն,

- Տնտեսագիտության տեսության եւ անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների ամբիոն,

- Ռուսաց լեզվի եւ մասնագիտական հաղորդակցության ամբիոն,

- Ռուս եւ համաշխարհային գրականության եւ մշակույթի ամբիոն,

- Հայոց լեզվի եւ գրականության ամբիոն,

- Լեզվի տեսության եւ միջմշակութային հաղորդակցության ամբիոն,

- Փիլիսոփայության ամբիոն,

- Հոգեբանության ամբիոն,

- Ընհանուր ֆիզիկայի եւ քվանտային նանոկառուցվածքների ամբիոն,

- Բժշկական կենսաքիմիայի եւ կենսատեխնոլոգիայի ամբիոն,

- Կրեատիվ ինդուստրիաների ամբիոն,

- Մաթեմատիկայի եւ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն,

- Համակարգային ծրագրավորման ամբիոն,

- Ֆիզիկական դաստիարակության եւ առողջ ապրելակերպի ամբիոն:

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. մայիսի 15-ից մինչեւ հունիսի 14-ը ներառյալ**՝ հետեւյալ հասցեով՝ **Երեւան, Հովսեփ էմինի փ. 123, Հայ-Ռուսական համալսարան, 2-րդ հարկ, 211 սենյակ (ՀՌՀ Կադրերի բաժին):**

Մրցույթի պայմաններին մանրամասն կարող եք ծանոթանալ ՀՌՀ կայքում՝ **https://rau.am/event/konkurs-rau-2024** կամ զանգահարել **(012) 26-04-19** հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 2 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մայիսի 15-ից մինչեւ մայիսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 4-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի հ. 2 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծ 34:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 56-91-05 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Ջրաբերի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մայիսի 15-ից մինչեւ մայիսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 31-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբերի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ջրաբեր, 1-ին փ., շ. 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 77-00-10 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան հ. 2 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի հայոց եկեղեցու պատմության (5 դասաժամ), հասարակագիտության (24 դասաժամ), ինֆորմատիկայի (15 դասաժամ), ֆիզիկայի (15 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (9 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

